

342.8

W-13

348.8

Ա. 14

24

01 MAR 20

«Յանայի» Գրադարան

№ 70

ԱՐՏԱՇԷՍ ԱՐԵՂԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Աշխատանք», Կրիլովսկի փող. № 15

1917

542.8
Ա-13
№ 70

«Յառաջի» Գրադարան

№ 70

300

1121-ԱԲ

ԱՐՏԱՇԷՍ ԱՐԵՂԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Աշխատանք». Կրիովսկի փող. № 15

1917

44-27-176

11399

27

01. 2013

1. Ժողովրդավարության հարցեր

Հանրական իրաւունքը անձանքի գաղափար չէ հայկական կեանքում: Մեր ազգային-հասարակական հաստատութիւնները ղեկավարել են, գոնէ որոշ չափով, այդ սկզբունքով: Սակայն մեր կեանքում չէ եղել և ոչ մի շրջան, երբ հանրութեան միտքը այնչափ զբաղւած լինէր այս առաջնակարգ հարցով, որչափ այժմ: Այն հանգամանքը, որ Ռուսաստանը մեր օրերում մի տանձին թափով թեւակոխում է գէպի մի նոր կեանք, որի հիմքը պիտի կազմէ ժողովրդագետութիւն, ուստի և հասկանալի է այն տենդային հետաքրքրութիւնը, որ գոյութիւն ունի այդ հարցի շուրջ:

Եւրոպական ժողովուրդները վաղուց արդէն ունենալով ղեկավարող մի ուղիի վրայ, նրանք այժմ զբաղւած են միայն վերջնականապէս հարթելով այդ ուղին: Մեր դարաշրջանը իրամամր կարող է կոչւել պնտական հասարակական կեանքի ռամկավարացման դար, որ իբրեւ կտակ թողեց «լուսաւորութեան» (18-րդ) դարը, մասնաւորապէս նրա թագն ու պսակը՝ Փրանսիական Մեծ Յեղափոխութիւնը:

Ռուսական Մեծ յեղափոխութեան շնորհիւ էլ՝ ղեկավարող մի գաղափարը նաեւ Ռուսաստանում միանգամից գրաւեց ամուր հող: Ներկայումս նա քարձել է հանրային սեփականութիւն: Պորեղոնոսցեր, «Ռու-



4039-89

սաստանի սև հողին», ինչպէս որ նրան կոչել են Եւրոպայում, այն կարծիքն է յայտնել ռամկավարութեան մասին, թէ նա «մեր ժամանակի ամենամեծ խաբերայութիւնն է»: Միանգամայն հակառակ հարծիքի են եղել և են ժողովրդի իսկական բարեկեանքը, որոնց բոլորի կարծիքը կարելի է ամփոփել անգլիացի յայտնի տնտեսագէտ և հասարակագէտ Զոն Մալեարս Միլլի հետեւեալ խօսքի մէջ. «Կառավարութեան լուսագոյն եղանակը ռամկավարութիւնն է»:

Նախ տեսնենք, թէ ինչ է գեմովրատիզմը: Այս խօսքի տակ պիտի հասկանալ այն սկզբունքը, որի համաձայն պետական-հասարակական կեանքում գոյութիւն ունեցող ամեն մի օրէնսդրութիւն, իշխանութիւն կամ կառավարութիւն պիտի բղիւնէ ժողովրդից, հասարակութեան կամքի մէջ պիտի ունենայ այդ իշխանութիւնը իւր հիմքը: Ուրիշ խօսքով՝ մի տէրութեան ազգաբնակչութիւն ինքն է իրեն կառավարողը և ոչ ուրիշ մէկը կամ շատերը: Այդ են պահանջում թէ արդարութիւնը և թէ մի ժողովրդի շահերը:

Իսկ ինչպէս կարող է մի ժողովուրդ ինքն իրեն կառավարել. չէ՞ որ շատ բարդ գործ է ժողովրդի կառավարութիւնը: Հին պատմութիւնը ուսումնասիրելով՝ մենք տեսնում ենք հետեւեալը: Հին Յունաստանի զանազան քաղաքներ (օր. Աթէնք, Սպարտա) իրենց շքեղականերով կազմում էին առանձին և անկախ պետութիւններ, — քաղաք-պետութիւններ: Երբ հարկաւոր էր լինում օրինակ Աթէնքի համար մի օրէնք հրատարակել կամ պատերազմ յայտարարել՝ հաւաքում էր ժողովուրդը մի տեղ և վճիռ կայացնում. ուրեմն՝ ժողովուրդն անմիջապէս կառավարում էր ինքն իրեն. այնտեղ գոյութիւն ունէր անմիջական ժողովրդագլխարկ: Այսպիսի կառավարութեան եղանակ գոյութիւն ունէր

նաև միջին Ռուսաստանի մի քանի իշխանութիւններում, օր. Նովգորոդում, Պսկովում: Երբ հարկաւոր էր լինում կարգադրութիւններ անել պետական կարևոր հարցերի շուրջ՝ իշխանութեան սահմաններում ազրոդ արտկան սեռի բոլոր չափահաս մարդիկ ժողովի էին հաւաքում քաղաքի հրապարակ: Այդպիսի ժողովները միջնադարեան Ռուսաստանում վեչե (вече) անունն էին կրում:

Անմիջական ժողովրդագլխարկութիւն գոյութիւն ունի ներկայումս միայն Շւեյցարիայի մի քանի թուով չորս մանրիկ՝ այսպէս կոչւած «գիւղական համայնքների» կանտոններում (Landsgemeindekanton): Շնորհիւ այդ կանտոնների փոքր տարածութեան և սակաւթիւ, գլխաւորապէս գիւղացիական, ազգաբնակչութեան — նրանցից ամենաբազմամարդը հազիւ 60,000 բնակիչ ունի, — հնարաւոր է եղել մինչև մեր օրերը պահել այդ երկիրներում անմիջական ժողովրդագլխարկութիւնը: «Համայնական ժողովը» (Landsgemeinde) գումարւում է տարւայ մի որոշ ժամանակ, որն և միաժամանակ ազգային առնախմբութեան ընաւորութիւն է կրում. բաց երկնքի տակ մշակւում և հրատարակւում են օրէնքներ, անում են արհրաժեշտ կարգադրութիւններ, ուր և ընտրւում են այն սակաւաթիւ պաշտօնեաները, որոնք անհրաժեշտ են համարւում ընթացիկ գործերը կառավարելու համար, — գիւղապետներ, դատաւորներ, գունձապահներ և այլն:

Վերոյիշեալ օրինակները ցոյց են տալիս, որ անմիջական ժողովրդագլխարկութիւնը հնարաւոր է պահպանել միայն շատ մանր և սակաւաթիւ ազգաբնակչութիւն ունեցող երկիրներում: Ինքնառտինքեան հասկանալի է, որ մեր ժամանակի սովորական պետութիւնները անկարող են իրագործել անմիջական ժողովրդա-

պետութիւնը: Ոչ մի հնարաւորութիւն չի կրնի օր-
հողարիայի, Յունաստանի—էլ չեմ ասում Պերմանիա-
յի կամ Ռուսաստանի ամբողջ իրաւատէր ազգաբնա-
կութիւնը ամեն տարի, թէկուզ կարճ ժամանակով,
մի տեղ հաւաքել և օրէնքներ մշակել ու հրապարակել:

Նոր ժամանակները մշակել և գործադրութեան
մէջ են մտցրել ժողովրդապետութեան մի ուրիշ եղա-
նակը, ոչ անմիջական, այլ միջնորդական կամ Թերզիէն-
յացուցչական ժողովրդապետութիւնը: Վերջինիս էութիւնը
հետեւեալն է: Քանի որ անհնար է, նոյնիսկ յա-
ճախ ցանկալի էլ չէ, մի երկրում մտցնել անմիջական
ժողովրդապետութիւն, ուստի և ժողովուրդն իր ազատ
կամքով քնտրում է իր միջից արժանաւոր և վստահելի
անձնաւորութիւններ, որոնք և, ազգաբնակչութեան
որոշ մասի ներկայացուցիչը լինելով, ժողովում են և
միասին խորհրդակցելով հրատարակում օրէնքներ, կա-
ռավարում երկիրը:

Իսկ այն իրաւունքը, որով մի պետութեան քա-
ղաքացի կամ մի համայնքի անդամ իրաւունք է ստա-
նում պետական-հասարակական գործերը վարող հա-
տատութիւնների ընտրութիւններին մասնակցելու,
կոչւում է քնտրական իրաւունք. ընտրելու իրաւունքը
կոչւում է տիջիւ ընտրական իրաւունք, իսկ ընտրելու
իրաւունքը՝ պատիւ ընտրական իրաւունք:

Անտարակոյս պետական կեանքի զարգացումը
անմիջական ժողովրդապետութիւնից մի ոտիւնով չէ
թեւոյթիս ժամանակից ներկայացուցչական ժողովրդա-
պետութիւնը: Շւէյցարիայում, օրինակ, մեր օրերում
էլ գոյութիւն ունի ժողովրդապետութեան մի եղանակ,
որ միջին տեղն է բռնում վերոյիշալ երկուսի մէջ:
Թուրք ու Ֆերենդումի մասին է, որի էութիւնը հետե-
ւեալն է: Երբ հարկաւոր է լինում երկրի համար մի

օրէնք հրատարակել՝ այդ օրէնքը մշակում է ժողով-
րից ընտրւած ներկայացուցչական ժողովում, այնաեղ
քննելուց յետոյ օրինագիծը յանձնւում է ատանձին-
առանձին համայնքներին ի ձայնատուութիւն: Եթէ
ժողովրդի մեծամասնութիւնը օրինագծին հաւանութիւն
տայ՝ նա կընդունւի և կդառնայ հաստատուն օրէնք,
իսկ եթէ ոչ՝ կմերժւի բոլորովին: Ուրեմն, յամենայն
զէպս, օրինագծի վերջնականապէս վճռող ինստան-
ցիան, իսկական օրէնստուն ոչ թէ ժողովրդական ներ-
կայացուցիչներն են, այլ ժողովուրդը ինքը: Երկու առ-
սակ ռեֆերենդում կայ—1. պարտադիր՝ ամեն մի քրն-
նուող օրինագծի համար, 2. Ոչ-պարտադիր (ֆակու-
տատիւ), երբ ռեֆերենդումի են դիմում որոշ թւով
քաղաքացիներ:

Ռեֆերենդումի հետ կապւած է մի քանի կան-
տոններում ինիցիատիւ կամ օրէնսդրական նախաձեռ-
նութեան իրաւունքը. այսինքն որոշ թիւ կազմող քա-
ղաքացիներ իրաւունք ունեն ներկայացուցչական ժո-
ղովի քննութեան առարկայ դարձնել իրենց կողմից
առաջարկւած օրինագծեր:

Եւրոպական միւս երկիրներում իսպառ վերացել
է անմիջական ժողովրդապետութիւնը: Ժողովրդական
ներկայացուցիչների ձեռքին է օրէնսդրական իրաւունքը:
Նոյնիսկ երկրի սահմանադրութիւնը փոփոխելիս գի-
մում չէ լինում անմիջապէս իրեն ժողովրդին: Ուրիշ
խօսքով՝ ժողովրդապետութիւնը ժամանակակից սահ-
մանադրական և պարլամենտական պետութիւններում
ընտրել է կողմնակի ճանապարհ՝ ընտրւած ներկայա-
ցուցիչների միջոցով:

Մոլորական կեանքում էլ շատ է պատահում, որ
որոշ սահմանափակ թւով մարդիկ, երբ անհնար կամ
անկարելի է լինում համախմբել և իրենց բոլորին

հետաքրքրող հարցերի մասին խորհրդակցել, նրանք ընտրում են իրենց միջից ներկայացուցիչներ, որոնք և միասին խորհրդակցելով անօրինում են բոլորին վերաբերող գործերը, այսպէս է լինում օր. ակցիոններական, արհեստակցական և այլ ընկերութիւններում: Այսպէս է լինում նաև հասարակական գործերում՝ օր. քաղաքային ինքնավարութեան ձայնաւորների ընտրութիւնը և և այլն: Եւ եթէ մենք կարևոր նշանակութիւն ենք տալիս վերոյիշեալ, մասնաւոր և սահմանափակ թւով մարդկանց վերաբերող ընտրութիւններին հրչափ աւելի աշակուղջ վերաբերմունք պիտի ցոյց տանք ղէպի համապետական ընտրութիւնները, որոնցից է կախած ամբողջ պետութեան վիճակը:

Սահմանադրական երկիրներում, համապետական գործերի համար, ուրեմն, գոյութիւն ունի ընտրական իրաւունք: Այն քաղաքացին, որ իրաւունք ունի վերոյիշեալ նպատակով մասնակցելու ընտրութիւններին, կոչւում է ընտրող (избиратель), իսկ ընտրւած՝ երեսփոխ, ներկայացուցիչ կամ պատգամաւոր (դեպուտատ): Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը, որ կանչւում է մի քանի (սովորաբար 4—6) տարով և ուր քննւում և մշակւում են ամբողջ երկրին վերաբերող օրէնքներ, զանազան երկիրներում զանազան անուն է կրում. Անգլիայում պարլամենտ, Գերմանիայում՝ ռայխստագ, Ֆրանսիայում պատգամաւորների ժողով, Ռուսաստանում այդ հաստատութիւնը Պետական Դումա է կոչւել:

Ո՞րն է ամեն մի ժողովրդական ներկայացուցչութեան գլխաւոր դերը:

Բոլոր սահմանադրական երկիրներում իշխանութիւնը բաժանւում է երեք կարգի—օրէնսդրական, գործադիր և դատական: Կարևորագոյնը նրանց մէջ օրէնս-

դրական իշխանութիւնն է, նա է հրատարակում ամբողջ երկրի համար պարտադիր օրէնքներ և, այդպիսով, նրա ձեռքին է երկրի վիճակի անօրէնութիւնը: Այդ իշխանութիւնն է, որ գտնւում է ժողովրդական ներկայացուցիչների ժողովի՝ պարլամենտի ձեռքում: Ի հարկէ, այդ իրաւասութիւնը լինում է սահմանափակ կամ լայն, նայած թէ մի սահմանադրական երկրում հրչափ զերիշխող է դարձել ժողովրդապետութիւնը: Ըստ այնմ էլ՝ ուր գոյութիւն ունի իսկական ժողովրդապետութիւն, բուն Պարլամենտը (հասարակապետութիւններում) օրէնսդրական և միւս իշխանութիւնները բարձրագոյն իշխանութիւնը անբաժան գտնւում են ժողովրդից ընտրւած ներկայացուցիչների ձեռքում. իսկ ուր իշխում են սոսկ սահմանադրական կարգեր (սահմանադրական միապետութիւն), այնտեղ բարձրագոյն իշխանութիւնը բաժանւում է, մասամբ գտնւում է ժողովրդի, մասամբ էլ է միապետի ձեռքում. նրանք երկուսը միասին միայն կազմում են պետութեան բարձր իշխանութիւն, իսկ միւս՝ գործադիր և դատական իշխանութիւն՝ արդէն իսկ նոյն միապետի գործակալների արտօնութիւնն է լինում: Իսկ ինքնակալ միապետական երկիրներում ամբողջ բարձրագոյն իշխանութիւնը գտնւում է միապետի ձեռքում:

Յամենայն դէպս ակներև է ժողովրդական ներկայացուցիչների ժողովի՝ պարլամենտի ունեցած ահագին նշանակութիւնը մի երկրի համար: Ժողովրդի համար կենսական հարց է, թէ ի՞նչ մարդկանցից է բաղկացած պարլամենտը, որը սահմանում է, թէ ի՞նչ իրաւունքներ և պարտականութիւններ ունեն պետութեան քաղաքացիները կամ դատակարգերը, թէ ի՞նչ տեսակ հարկեր են սահմանւում և ինչպէս են գործադրւում ժողովրդից հաւաքած փողերը, և թէ ի՞նչ իրաւունքներ և

պարտականութիւններ պիտի ունենան երկիրը կասա-
վարող աստիճանաւորները, և այլն: Ուստի և բնակա-
նաբար, ամեն մի քաղաքացի պարտաւոր է իմանալ և
զիտակցել, թէ ինչպէս են բնութեամբ ժողովրդական ներ-
կայացուցիչները, արդեօք գոյութիւն ունեցող ընա-
րական կարգերը ապահովում են ամբողջ ժողովրդի, թէ
որոշ դասակարգերի շահերը, ինչպէս պիտի ընտրել,
որի հետեանքը լինի ամբողջ ժողովրդի, ամենից առաջ
աշխատաւոր դասակարգերի շահերի պաշտպանութիւնը:
Ահա այս հարցերին կուգէինք տալ պատաս-
խանքներ:

II. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝

Բաւական չէ, որ թղթի վրայ գոյութիւն ունե-
նան թէկուզ ամենալաւ օրէնքներ, ամենադեմոկրատիկ
ընտրական իրաւունք. հարկաւոր է, որ այդ բաւորը
նաեւ գործադրւի կեանքի մէջ:

Յայտնի է, որ նախքան յեղափոխութիւնը էլ
Ռուսաստանը ունէր սահմանադրութիւն, որը, առկայն,
մնում էր մեռած տառ երկրի համար. իրապէս իշխում
էր ամենադաժան բռնապետութիւնը: 1905 թ հոկտ.
17-ի մանիֆեստով Ռուսաստանի համայն ազգաբնա-
կութեան խոստացւեցին մի շարք քաղաքական ազա-
տութիւններ. մի, թէև թերի, սահմանադրութիւն. սա-
կայն իրականութիւնը մեզ այլ բան ցոյց տուեց. եր-
կիրը հեծում էր ցարիզմի ճիրանների մէջ:

Ուրեմն՝ բաւական չէ որ օրէնքով սահմանւի
թէկուզ ամենադեմոկրատիկ՝ քառանդամ ընտրական ի-
րաւունք, ինչպիսին և պահանջում են բոլոր առաջա-
վար կուսակցութիւնները. հարկաւոր է, որ ժողովրդին,

ընտրողներին հնարաւորութիւն տրւի օգտւելու այդ ի-
րաւունքից. մի խօսքով՝ հարկաւոր է ստեղծել այն-
պիսի նախընտրական պայմաններ, որոնք ապահովեն
սահմանաւոր ընտրութիւնները:

Ամեն մի ազատ ընտրութիւն կատարելու համար
անհրաժեշտ է, որ երկրում իշխէ կատարեալ ազատու-
թիւն՝ խօսքի, մամուլի եւ ժողովուրդի ազատութիւն,
նաեւ՝ անձի եւ բնակարանի անձեռնմխելութիւն:

Երբ մէկին իրաւունք է տրւում ընտրելու կամ
ընտրելու, այդ դէպքում, ընականաբար, անհրաժեշտ է,
որ գոյութիւն ունենան վերոյիշեալ ազատութիւնները:
Հարկաւոր է, որ մարդիկ իրենց քաղաքական-հասա-
րակական հայեացքները ազատ կերպով արտայայտեն
թէ՛ գրաւոր և թէ՛ բանաւոր կերպով՝ ուր և կամենան:
Ուր չկան նախընտրական այս անհրաժեշտ պայման-
ները, այնտեղ կատարւած ընտրութիւններն էլ չեն
լինիլ արտայայտութիւն ժողովրդական կամքի:

«Մարդս հասարակական կենդանի է», ասել է
դեռ շատ դարեր առաջ յայտնի յոյն փիլիսոփայ Արիս-
տոտելը: Այդ խօսքով նա յայտնել է այն տկնայատ
ճշմարտութիւնը, թէ մարդ իբրեւ այդպիսին անբաժան
է հասարակութիւնից, նրանից է ստանում իւր մտա-
ւոր և բարոյական կարողութիւնը, և փոխադարձա-
բար՝ նրանից էլ օգտւում է հասարակութիւնը: Երբ
մէկը ունի մի քաղաքական համոզմունք, նա սովորա-
բար անհրաժեշտութիւն է զգում քարոզելու, տարա-
ծելու այդ համոզմունքը: Եւ այդ կարելի է ամենից
առաջ՝ խօսքի, մամուլի և ժողովումների միջոցով:
Հարկաւոր է, որ մարդկանց միտքը չկաշկանդեն զանա-
զան սոսիկանական և ցենզորական շղթաներով, պէտք
է ամենքին ազատ թողնել գրելու և քարոզելու իր
մտքերը:

Հոկտեմբերեան մանիֆեստը խոստանում էր այդ ազատութիւնները. խոստումը գործ չդարձաւ, յայտնի է, որ այդ մանիֆեստից յետոյ աւելի ևս իր թեւերը տարածեց համայն Ռուսաստանի վրայ արիւնոտ, խաւար բռնակալութիւնը:

Ու այդ պայմանների մէջ կատարում էին Պետական Դումայի ընտրութիւնները:

Թոյլ չէին տրւում ժողովուրդներ, ուր ամեն տեսակ քաղաքական համոզմունքի տէր մարդիկ խօսէին ու բացատրէին իրենց ծրագիրները: Հէնց որ մի քանի մարդիկ հաւաքուում էին միասին, իսկոյն նրանց ցըրւում էին սեփաների ոյժով: Չկար նաև մամուլի ազատութիւն: Հէնց որ մի օրգան խիստ քննադատում էր կառավարութիւնը՝ իսկոյն լռեցնում էին նրան, փակում լրագիրները, դեռ շատ անգամ խմբագրին էլ աքսորում էին:

Կառավարութիւնը, զրկելով ազգաբնակչութիւնը անհրաժեշտ համարւող նախընտրական պայմաններից՝ խօսքի, մամուլի և այլ ազատութիւններից՝ նպատակ ունէր զրկել այդ ընտրութիւնները ժողովրդական ոգուց, դարձնել նրանց մի նոր ստոր գործիք՝ բիւրոկրատիայի ձեռքին:

Ապա՝ հարկաւոր է նաև անձի ու բնակարանի անձեռնամխելութիւն: Սովորական բան էր, որ մեզնում առանց որևէ հիմնաւոր պատճառի, նոյնիսկ կէտ չիշերին, մտնէին մէկի բնակարանը և խուզարկէին թէ բնակարանը և թէ բնակիչներին: Ուրիշ խօսքով՝ ժանդարմերիան կամ ոստիկանութիւնը ազատ էին ձեռնամուխ լինելու մեր անձին և մեր բնակարանին. բաւական էր, որ մէկը «անսխտահելի» կամ «անբարեյոյս» ճանաչւած լինէր ոստիկանութեան կողմից:

Այդպիսի անսխտահութիւն արտայայտւում էր

մանուաւոր ընտրութիւնների ժամանակ դէպի այնպիսի մարդիկ, որոնք իրենց քաղաքական-հասարակական համոզմունքներով հակառակորդ էին հանդիսանում կառավարութեանը. և նրանք ենթակայ էին լինում հալածանքի:

Ուրեմն՝ անհրաժեշտ նախընտրական պայման է նաև անձի և բնակարանի անձեռնամխելութիւնը, առանց որի անկարելի է ազատ պրոպագանդ մղել:

Վերոյիշեալ նախընտրական պայմանները այն ընդհանուր գիծն ունեն, որ նրանք դուրս են ընտրողների անմիջական իրաւասութիւնից, նրանք սահմանւում են օրէնքով:

Բայց կան նաև մի շարք ուրիշ պայմաններ, որոնք կախւած են արդէն ընտրողների կամքից, պայմանով որ երկրում իշխեն վերոյիշեալ անհրաժեշտ համարւած ազատութիւնները:

Ասենք թէ երկրում գոյութիւն ունեն խօսքի, մամուլի ժողովների ազատութիւն: Այս դեռ բաւական չէ, որ կատարւելիք ընտրութիւնները լինեն ժողովրդավար:

Զէ՛ որ ժողովուրդը, ամբողջովին վերցրած, գիտակից չէ միանգամայն, նա դեռ չգիտէ իր շարն ու բարին, ոչ-բոլորը գիտեն, թէ պարլամենտի համար ընտրւող պատգամաւորը ի՞նչպիսի օրէնքներ հրատարակելուն պիտի աջակցէ, որ լինեն ժողովրդի շահերին համապատասխանող:

Օրինակ՝ պարլամենտում պիտի որոշեն, թէ ինչպիսի հարկեր պէտք է հաստատուել. ամբողջ ազգաբնակչութիւնը շահագրգռւած է այդ բանում: Իսկ այդ հարցը տարբեր մարդիկ տարբեր կերպով են հասկանում:

Հարկաւոր է ուրեմն, որ ընտրութիւնից առաջ

հիմնական քաղաքական-սոցիալական հարցերի մասին նոյն կերպ մտածող մարդիկ համախմբւեն, հարկաւոր է, որ այդպիսի համախմբումները առաջնորդւեն իրենց որոշ, սեփական ծրագրով:

Նոյն ընտրական շրջանում, այդպիսով, առաջ կը գան մի քանի խմբակներ՝ տարբեր ծրագիրներով: Այդ խմբակներէն իւրաքանչիւրը կաշխատի, որ ընտրելի իր թեկնածուն, քանի որ, իր կարծիքով, նա կարող է ամենալաւ կերպով պաշտպանել իր ընտրող խմբակի հասկացած ճշմարիտ քաղաքական-հասարակական հայեացքները:

Մի տէրութեան սահմաններում նոյն հիմնական քաղաքական-տնտեսական համոզմունքներն ունեցող խմբակները միանալով կազմում են կուսակցութիւններ, իսկ նրանց բոլորին միացնող ընդհանուր ծրագիրը՝ կուսակցութեան ծրագիր, որ ընդունելի պիտի համարւի կուսակցութեան բոլոր անդամների համար:

Ազատ երկիրներում այդպիսի կուսակցութիւնները հանգիստանում են մի-մի համայնքներ, իրենց որոշ կանոնադրութեամբ ընկերական սերտ յարաբերութիւններով—մանաւանդ՝ սոցիալիստական կուսակցութիւնները: Պարլամենտական-քաղաքական կուից գուրս էլ նրանք պահպանում են իրար հետ ընկերական-կուսակցական կապ. ունենում են իրենց յատուկ կուսակցական կուրքները, ժողովները, ընկերութիւնները, յատուկ կուսակցական գրականութիւն: Թէ խօսքի և թէ գրի միջոցով ամեն տեղ նրանք տարածում են իրենց կուսակցութեան գաղափարները, որոնցով և ազդում են կուսակցութեան անդամները:

Այդ բոլորից զատ հարկաւոր են նաև մի քանի տեխնիքական յարմարութիւններ: Ընտրութիւնները կատարւում են այսպէս: Ամբողջ երկիրը բաժանւում է

որոշ թիւ կազմող ընտրական շրջաններ: Այդ շրջանները կարող են համապատասխանել արդէն գոյութիւն ունեցող վարչական շրջաններին (նահանգ, գաւառ, քաղաքամաս և այլն), կամ, ավելի լաւ, կարող են բոլորովին նոր կազմւել: Յամենայն դէպս, ռամկավար ընտրութիւնները պահանջում են, որ ընտրական շրջանները ունենան գոնէ մօտաւորապէս համաչափ ազգաբնակչութիւն, որպէսզի պարլամենտ գնացող բոլոր պատգամաւորները ներկայացուցիչ լինեն հաւասարաչափ ազգաբնակչութեան:

Իւրաքանչիւր ընտրական շրջանի համար պատրաստում են ընտրովների ցուցակ (списокъ избирателей), որից և իմացւում է թէ այդ շրջանում ով իրաւունք ունի ընտրելու: Այդ ցուցակները օրեր, նոյնիսկ շաբաթներ տալով պիտի պատրաստել և յայտարարել կամ կպցնել հրապարակական վաշերում, որպէսզի բոլոր բնակիչները հնարաւորութիւն ունենան ստուգելու ցուցակները: Ազատ հոգս պիտի քաշել, որ ընտրութեան ժամանակ, երբ հրաւեր է ուղարկւում ընտրողներին, այդպիսի հրաւերներ ստանան բոլոր ընտրողները. չլինի թէ զանազան կուսակցական և այլ միտումներով շատերը զրկւեն ձայնուութիւնից:

Այդ անկողաց յետոյ ընտրական շրջանում որևէ ոչո՞նք ներկայացնող ամեն մի կուսակցութիւն յայտարարում է իւր թեկնածուի անունը. յանձնարարում է իւր կուսակիցներին և ամենքին, որ ընտրեն այդ թեկնածուին պրոպագանդ և ագիտացիա է անում, թէ միայն այդ կուսակցութեան ներկայացուցիչը կարող է պաշտպանել ժողովրդի իսկական շահերը:

Ազատ երկիրներում իրենք թեկնածուներն էլ պրոպագանդ են անում, ձանապարհորդում են գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, միտինգներ են անում, բա-

ցատրում են իրենց ծրագիրը, պարզում են իրենց ապագայ գործունեության եղանակը պարլամենտում: Մղում է կատաղի կուսակցական պայքար: Շատ հետաքրքիր է ընտրական պայքարը մանաւանդ Անգլիայում և Ամերիկայում: Ամբողջ երկիրը բռնած է լինում ահնդոտ հետաքրքրութեամբ: Ամեն օր տեղի են ունենում բազմամարդ միտինգներ, ծախսում են անադին գումարներ, հանդէս են գալիս կուսակցութիւնները, որը զօրեղ, որը՝ թոյլ: Աւելի թոյլերը «բլսկ» են կազմում, այսինքն միանում ուժեղ կուսակցութեան դէմ, որպէսզի գոնէ միացեալ ոյժերով, կոմպրոմիսսով, անցկացնեն իրենց ընդհանուր թեկնածուին:

Որպէսզի հասարակութիւնը կարողանայ հետեւել ընտրութիւններին, որ նրանք լինեն կանոնաւոր, բնորոշում է մի բնութեան բիւրօ (избирательное бюро): Այդ բիւրօն մէջ մտնում են զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչներ, որպէսզի հետեւեն ընտրութեան կանոնաւորութեան:

Մինչև ընտրութեան օրը ամեն մի ընտրող ստանում է անւանական քարտ, որով իրաւունք է տրւում մէկին ձայն տալու: Այդ քարտը ընտրողը ներկայացնում է ընտրողական բիւրօին և տալիս է իր ձայնը: Քարտը ուրիշին յանձնելու իրաւունք չկայ, առաջ թէ ոչ հարուստների համար զօւար չէր լինի գնել այդպիսի շատ քարտեր և իրենց մարդուն անցկացնել: Ընտրական բիւրօն մէկ-մէկ նշանակում է, թէ ովքեր ձայն տւին:

Բուն ընտրութիւնը կատարւում է ընտրութեւրի (բիւլետեններ) միջոցով, որոնց վրայ նշանակւած են լինում բոլոր թեկնածուների անունները. ամեն մի կուսակցութիւն կարող է հրատարակել նաև իր ընտրութեւրի իր թեկնածուների անուններով: Առաջին

դէպքում ամեն մի ընտրող ջնջում է ընտրութեւրի վրայ նշանակւած իր ոչ ցանկալի մարդկանց անունները. իսկ երկրորդ դէպքում ընտրողը բիւրօին յանձնում է իր կուսակցութեան ընտրութեւրը:

Երբ ստացւում են բոլոր ընտրութեւրները, որոշեալ ժամից յետոյ բոլոր գցում են յատուկ պատրաստւած արկղի (ուրնա) մէջ: Այնուհետև սկսում են հաշուել ձայները: Որ թեկնածուն ստացած է լինում ընտրողների թւի կիսից աւելի ձայն, նա համարւում է ընտրւած: Այն դէպքում, երբ ոչ մէկը ստացած չի լինում այդչափ ձայն, սովորաբար տեղի է ունենում կրկնաւեարկութիւն. այս անգամ ձայների համեմատական առաւելութիւն ստացող թեկնածունը համարւում է ընտրւած:

Չպէտք է մոռանալ նաև այն, որ ընտրութիւնները կանոնաւոր և նպատակայարմար անելու համար նկատի պիտի ունենալ նաև ընտրութեան ժամանակ և տեղը:

Եթէ ընտրութիւնները նշանակեն շաբաթաց մէջ, երբ աշխատաւորները զբաղւած են լինում, նրանցից շատ շատերը իրապէս զրկւած կլինեն ընտրելու յարմարութիւնից, — թէկուզ ընտրութիւնները տեւելու լինեն մինչև ուշ երեկոյ: Բանւորը չէ կարող թողնել աշխատանքը և երթալ մասնակցելու ընտրութիւններին, այդ դէպքում նա կենթարկւի տուգանքի կամ նոյնիսկ կարճաւելի գործից: Աշխատանքը վերջացնելուց յետոյ էլ, յոգնած ու վատաւած և անային հոգսերով ծանրաբեռնւած՝ շատերը չեն երթալ ընտրութիւններին: Հետևանքը այն կլինի, որ կուշտ ու հանգիստ, միշտ ազատ ժամանակ ունեցող արտօնեալ դասակարգերը կմասնակցեն ընտրութեանը, իսկ շատ աշխատաւորներ կզրկւեն դրանից: Այդ է ցոյց տալիս



իրականութիւնը: Անհրաժեշտ է ուրեմն, որ ընտրութիւնները լինեն կիրակի կամ տօն օրերին:

Անհրաժեշտ է մտածել նաև այն մասին, որ ընտրութիւնները կատարւեն յարմարաւոր տեղ, կենտրոնական վայրում: Եթէ ընտրութեան վայրը հեռու է, այդ դէպքում էլ աշխատաւոր գիւղացին չէ կարող թողնել իր գործը և տասնեակ վերստեր հեռու գտնւող ընտրութեան տեղ երթալ, ուր նա պիտի ձայն տայ: Հարուստների, կալւածատէրերի համար դժուար չի լինի կառքով ու ձիով «գրօսանք» կատարել, երթալ ուր պէտք է, իջնել հիւրանոցներում, օրերով նոյնիսկ մնալ, օգտուել ընտրական իրաւունքից և ապա վերադառնալ: Ընտրողներին հարկաւոր է գիւրութիւն տալ, որ նրանք ըստ կարելոյն հեռու երթալու չստիպւեն և կարճ ժամանակակայ ընթացքում կատարեն իրենց պարտականութիւնը:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Եթէ մի երկրում գոյութիւն ունեն անհրաժեշտ համարւած նախընտրական պայմաններ ժողովրդագրութիւն հաստատելու համար, այդ դէպքում էլ ծագում է մի ուրիշ, ամենակարևոր հարց. — ինչպիսի ընտրութիւններ են հարկաւոր, որոնք բուն արտայայտիչ լինեն ժողովրդական կամքի, որոնց միջոցով ամբողջ ժողովուրդը, և ոչ նրա այս կամ այն գասակարգը, կարողանայ հանդէս գալ յանձին ժողովրդական ներկայացուցիչներին: Ընթերցողը կիմանայ արդէն, որ առմէկվար կուսակցութիւնները պահանջում են բոլոր ընտրութիւնները կատարել քառանգամ սիստեմով,

այն է՝ իրագործել բնդհանուր, հաւասար, սզղակի եւ զաղճի բնագրական իրաւունք: Դրա վրայ պիտի աւելացնել առմէկվար ընտրութիւնների մի ուրիշ կարևոր կողմը, այն է, որ նրանք պիտի լինեն նաև (համեմատական պրոպորցիոնալ): Այս բոլորի մասին էլ խօսք պիտի լինի այս գրքոյկում: Այն ժամանակ միայն ընտրութիւնները կլինեն ժողովրդական, երբ նրանք կատարւեն յիշած եղանակով:

Եւրոպական ազատ երկիրներում այս կամ այն չափով զտրճաղրւում է ընդհանուր ընտրական իրաւունքը, շատ տեղ մեծ սահմանափակումներով. կան նաև երկիրներ, ուր ընտրութիւնները կատարւում են այլ կերպ:

Ի՞նչ պիտի հասկանալ, երբ ասում են բնդհանուր ընտրական իրաւունք:

Այդ նշանակում է, թէ պարլամենտական կամ առաստարակ բոլոր ընտրութիւնների ժամանակ ձայնի իրաւունք պիտի ունենան պետութեան բոլոր չափահաս քաղաքացիները, — աղամարդ թէ կին — բացառութեամբ, ի հարկէ, հոգեկան հիւանդների և դատաստանական ճանապարհով ընտրական իրաւունքից զրկւածներին:

Սակայն իրականութիւնը ցոյց է տալիս, որ համարեա բոլոր երկիրներում էլ առաջ են բերում շատ խոչընդոտներ ընդհանուր ընտրութիւնների դէմ:

Շատ երկրներում գոյութիւն ունի ոչ թէ ընդհանուր, այլ զասային (сословное) ներկայացուցչութիւն, որի ժամանակ իշխում է կամ գերիշխում է երկրի ազնւականութիւնը: Այս դէպքում ուրեմն ընտրելու իրաւունք են ստանում մարդիկ ոչ իբրև հաւասար քաղաքացիներ՝ հաւասար իրաւունքներով և պարտականութիւններով, այլ իբրև որոշ դասի պատկանող ան-

հատներ: Ասում են, թէ զանազան դասերը՝ աղնաւահանութիւնը, գիւղացիութիւնը և քաղաքի բնակչութիւնը իբրև առանձին-առանձին դասեր ընտրութիւն պիտի կատարեն և իրենց դասի յատուկ պատգամաւորները պիտի ունենան ժողովրդական ներկայացուցչութեան մէջ:

Ընտրութեան այս սխառնման է եղել գերիշխող անցեալում, այդ սխառնմը գոյութիւն ունի դեռ այժմ էլ մի քանի յետագէմ երկիրներում: Ամեն մի դաս միասնալով խեղդում են երրորդի ձայնը:

Դասային ներկայացուցչութիւն գոյութիւն ունէր միջնադարեան Ֆրանսիայում մինչև Մեծ Յեղափոխութիւնը. դրանից առաջ հրաւիրւած այսպէս կոչւած «երեսփոխանական ժողովը» (генеральные штаты) դասային բնաւորութիւն ունէր: Մինչև 1906 թ. Ֆինլանդական սէյմն էլ դասային ներկայացուցչութիւն էր. աղնաւահանութիւնը, հողերտէրտութիւնը, գիւղացիութիւնը և բուրժուադիան ուղարկում էին իրենց առանձին-առանձին ներկայացուցիչներին: Այժմ արդէն վերացել է այդ խայտառակ ընտրական սխառնմը և մտցրել է ընդհանուր ընտրական իրաւունք:

Դասային ներկայացչութիւն է նաև անգլիական պարլամենտի վերին կամ «լորդերի» (աղնաւահանների) պալատը:

Դասային սխառնմով էին առաջնորդւում նաև Ռուսաստանի զեմստեովները: Զեմստոյի համար իրաւասուններ ընտրւում էին խօշոր կալաւածատէրերի (աղնաւահանների) կողմից առանձին, գիւղացիների կողմից՝ առանձին, իւրաքանչիւրը որոշ թւով: Մի վիճակագրութեան նայելով՝ 9523 զեմսկի ձայնաւորներից 5433 հոգի, այսինքն կէսից աւելին, աղնաւահանութեան ներկայացուցիչներ են եղել, այսինչ աղնաւահանները մի

քանի հարիւր անգամ աւելի քիչ են, քան գիւղացիները: Ռուսաստանի 34 զեմսկի նահանգներում աղնաւահանների թիւը հասնում է 788 հազարի, իսկ գիւղացիների թիւը՝ 59 միլիոնի:

3-րդ և 4-րդ Պետական Դումաներն էլ դասային ներկայացուցչութիւն պէտք էր համարել, որ առաջ էր բերել 1907 թ. յունիսի 3-ի օրէնքը և աղնաւահան խոշոր կալաւածատէրերին գերակշռութիւն տւել ժողովրդական ներկայացուցչութեան մէջ: Այսպէս, մինչ 1905 թ. օրէնքի հետեանքով եւրոպական Ռուսաստանի 50 նահանգներից կալաւածատէրերը՝ տալիս էին 1959 պատւիրակներ ընդհանուր թւից, որ էր 5999, այսինքն՝ 32%, գիւղացիները՝ 2502 պատ. կամ 41%, իսկ բանւորները 208 պ. կամ 3%, պատկերը այլ էր՝ 1907 թ. յունիսի 3-ի օրէնքի հետեանքով. այսինքն՝ կալաւածատէրերը պատւիրակների ընդհանուր 5116 թւից տալիս էին 2620 հոգի կամ 51%, գիւղացիները՝ 32 և կամ 22%, իսկ բանւորները 112 հ. կամ ընդամենը 2%:

Դասային ներկայացուցչութիւնից տուժում է աշխատաւոր ժողովուրդը. նրանից շահ ունեն միայն աղնաւահանները, որոնք համարւում են իրենց «ազնիւ աւելին» ունեցողներ, հայրենիքի իսկական պաշտպաններ. ու նրանք արդարացնում են այն հին ֆրանսիական խօսքը, թէ «աղնաւահանութիւնը պիտի ծառայէ, հողերտէրտութիւնը՝ աղօթէ, իսկ ֆնացած բոլոր դասերը պիտի հարկերը վճարեն»:

«Պէտք է վերացնել բոլոր դասային խտրութիւնները» պահանջում են իսկական զեմօկրատները. բոլոր մարդիկ հաւասար են. ամեն մէկը պէտք է ձայն տայ իբրև քաղաքացի, ընտրութիւնը պիտի լինի ընդհանուր: Աւելորդ են այլիս դասերը, մանաւանդ որ նը-

րանք արդէն իսկ կորցրել են կամ կորցնելու վրայ են իրենց նախկին ֆունկցիաները: Սոցիալ-տնտեսական կեանքի մէջ կատարած փոփոխութիւնները էապէս յեղաշրջել են դասերը:

Դասային ներկայացուցիչները այժմ հետզհետէ վերանում է: Նա դեռ պահւած է մի քանի երկիրների պարլամենտներում (օրինակ՝ Անգլիայի վերին կամ լորդերի պալատը): Ստորին պալատներում դասային սկզբունքը համարեա վերացած կարելի է համարել: Միայն գերմանական փոքրիկ Մեկլինբուրգ պետութիւնն է, որ ներկայումս էլ համարեա զուտ դասային ներկայացուցիչն ունի: Այդտեղ մօտ 1,000 ազնւական ընտանիք կայ, որոնք և ներկայացուցիչներ են տալիս երկրի պարլամենտի համար, սակայն ոչ ընտրութեամբ, այլ ծագման իրաւունքով: միայն 48 պատգամաւորներ կան, որ ընտրւում են քաղաքների կողմից, առանց սակայն որեւէ ազդեցութիւն ունենալու պատգամաւորական ժողովի վրայ:

Դասային ներկայացուցչութեանը մօտ է ցենզային ներկայացուցչութիւնը:

Այս դէպքում ընտրութիւններին գերիշխում են ոչ թէ արտօնեալ ազնւականները, այլ սրտոյ ցինդ ունեցողները, — լինի կարողութեան ցինդ թէ մատուր ցինդ:

Կարողութեան ցինգի վրայ հիմնւած ընտրութիւնները արդարացնում են նրանով, թէ պետական կեանքի ղեկավարութեան գործում մասնակցութիւն ունենալ չեն կարող ընդհանրապէս բոլորը, այլ նայած թէ ով որ չափով հարկ է տալիս պետութեանը: Ուրեմն՝ ով աւելի հարկ է վճարում պետութեանը՝ աւելի էլ իրաւունք ունի. հարկ չվճարողները իրաւունք չոյէտք է ունենան մասնակցելու ընտրութիւններին:

Այնպիսի մի լիբերալ և յայտնի տնտեսագէտ ու հասարակագէտ անձն, ինչպիսին էր անգլիացի Ջոն Ստիւարտ Միլը, նա ևս պաշտպանում էր ցինզային ներկայացուցչութիւնը, ասելով «Կարեւոր է, որ (պարլամենտում) հարկերի համար ձայն տուող ներկայացուցիչները ընտրւեն բացառապէս նրանցից, որոնք վճարում են այդ հարկերի մի մասը»:

Նախ՝ այդպէս դատող պարոնները մոռանում են, որ չկայ և ոչ մի քաղաքացի, որ հարկ չվճարէ: Բուրժուազիայի իդէոլոգներին ձեռնառու է հարկ անւանել միմիայն «ուղղակի» կոչւած հարկերը: Հապա մյն բազմաթիւ և բազմատեսակ «անուղղակի» հարկերը սրտնց տակ ամենից շատ հեծում են ժողովրդի աշխատուոր գասերը, իրաւագուրկ խաւերը:

Միթէ բանւոր և գիւղացին, որոնք յաճախ զրրկւում են ընտրութիւններին մասնակցելուց կամ շատ աննշան տեղ է տրւում նրանց ձայնին, միթէ նրանք հարկ չեն վճարում:

Ո՞վ չգիտէ, որ ապրուստի անհրաժեշտ միջոցները, ինչպիսիք են թէյը, շաքարը, լուցկին, նաւթը, ծխախոտը և այլն, պետութեան կողմից ենթակայ են ամենախիստ հարկատուութեան: Իսկ ով է աւելի գործածում, այդ, համեմատաբար անհրաժեշտ պիտոյքները — աշխատաւորները: Նրանք ապրանք առնելու ժամանակ հէնց վճարում են պետութեանը հարկ: Բոլոր անուղղակի հարկերից պետութիւնների եկամուտների կէսից աւելին տալիս են աշխատաւորները՝ անուղղակի հարկերի միջոցով:

Իսկ այդչափ հարկ վճարող աշխատաւորներին իրաւագուրկ են անում: Բիւրոկրատները և կապիտալիստները սահմանում են այնպիսի օրէնքներ, որոնց համաձայն ընտրութեանը մասնակցելու իրաւունք ու-

նեն միայն այն մարդիկ, որոնք առնական որոշած չափով ուղղակի հարկ են վճարում:

Յենզային ներկայացուցչութեան մի խայտառակ օրինակ է ներկայացնում պրուսական լանդտագը: Պրուսիայում, 1848-ի յեղափոխութեան շնորհիւ, ընդունեց ընտրական իրաւունքը: Սակայն յեղափոխութիւնից յետոյ եկած ունեցիկայի շնորհիւ de jure ընդհանուր ընտրական իրաւունքը de facto միանգամայն սահմանափակեց և աղճատեց: Էլ համարձակութիւն չունեցաւ պրուսական բիւրոկրատիան ջնջել ընդհանուր ընտրական իրաւունքը, այլ յղացաւ մի հրէշտուր միաբ, որն և թագցրեց «gleiche Pflichten, gleiche Rechten» (հաւասար պարտականութիւններ, — հաւասար իրաւունքներ) նշանաբանի տակ:

Պրուսական լանդտագի ընտրութիւնները կատարւում են այսպէս կոչւած Dreiklassensystem-ով, այսինքն՝ Պրուսիայի ամբողջ ազգաբնակչութիւնը ըստ կարողութեան բաժանւում է երեք դասակարգի: Ամեն մի ընտրական շրջան էլ ըստ այնմ բաժանւում է երեք կարգի:

Առաջին կարգի մէջ մտնում են ամենահարուստները, սրոնք ամենից շատ են վճարում ուղղակի հարկեր. երկրորդ կարգի մէջ մտնում են սովորական հարուստները, որոնք վճարում են միջակ չափով ուղղակի հարկեր. և երրորդ կարգի մէջ մտնում են նրանք, որոնք քիչ ուղղակի հարկ են վճարում, և կամ չքաւորութեան պատճառով, բնաւ հարկ չեն վճարում:

Այս դեռ բաւական չէ: Այդ երեք կարգերից իւրաքանչիւրի վրայ դալիս են հաւասար չափով ուղղակի հարկեր: Ասենք մի ընտրական շրջան պէտք է վճարէ 3000 բուրլի ուղղակի հարկ. այդ շրջանի ամեն մի կարգը պիտի վճարէ 1000-ական բուրլի: Հետեանքը

անա թէ ինչ է լինում: 1893-ի ընտրութիւնների ժամանակ Բերլինում կային 18 ընտրողական շրջաններ, որոնցում առաջին կարգի մէջ մտնում էին միայն մէկ-մէկ ընտրողներ, և 78 ընտրական շրջաններ, որոնցում երկ-երկու ընտրող էր մտնում երկրորդ կարգի մէջ. իսկ Թագած ամբողջ ազգաբնակչութիւնը մասնակցում էր երրորդ կարգի մէջ: Նոյն թւի ընտրութիւնները ցոյց տւին, որ Պրուսիայի իւրաքանչիւր 100 ընտրողից միջին թւով առաջին կարգում մասնակցում էին 3 հոգի, երկրորդում՝ 12 հոգի, իսկ երրորդում՝ 85 հոգի: Ու ամենից աւելի խայտառակն այն է, որ ամեն մի կարգ օգտւում է հաւասար իրաւունքով ($\frac{1}{3}$). ուրիշ խօսքով՝ վերոյիշեալ փաստը օրինակ բերելով՝ առաջին կարգի 3 հոգին ունեն նոյն իրաւունքը, ինչ երկրորդ կարգերի 12-ը կամ երրորդի 85-ը: Սովորաբար առաջին և երկրորդ կարգի ընտրող տուգները միանալով տապալում են երրորդ կարգի ձայնը:

Թէ որչափ անհեթեթ է ընտրական այս կարգը, որ նոյնիսկ Բիսմարկի նման մի բիւրոկրատ ասել է. «Պրուսականից էլ աւելի անմիտ և ողորմելի ընտրական օրէնք չէ մուծւել և ոչ մի ուրիշ տէրութեան մէջ»:

Ազատցոյց. «Բերլինի այն ընտրական շրջանում, ուր բնակւում են մինիստրներ, երրորդ՝ ամենացածր, կարգի ընտրողների թւում էր գտնւում նաև նախկին պետական կանցլեր Բիւլովը՝ ուրիշ մինիստրների հետ միասին. սրանք բոլոր իրենց շէնյաքների և լակէյնների հետ հաւասարապէս ընտրում են երրորդ կարգում: Իսկ նրանց հարևան ընտրական շրջանի 1-ին կարգում մասնակցում էին ընդամենը երկու հոգի— Berliner Tageblatt-ի հրատարակիչը և բանկիր Բլէյխրեդերը: Մինիստրական ընտրական շրջանից ոչ հեռու գտնուող թաղում էլ 1-ին կարգի միակ ընտրողն էր պալատա-

կան մասդործ Գեֆտեր, սա հետեւապէս, քաջ հաստութեամբ ջախջախում էր միւս երկու կարգերի հարկաւոր ընտրողներին:

Առաջ Պրուսիայի սոցիալ-դեմոկրատները բոլորուած էին արեւ պրուսական այդպիսի խայտառակ ընտրական սիստեմի վրայ հիմնած լանդտագին: Պատճառը պարզ էր. այն Պրուսիայում, ուր ընդհանուր գերմանական ընտրութիւններից մէկի ժամանակ ապրիստագի համար ձայն էին տւել 1,600,000 սոցիալ-դեմոկրատներ, լանդտագի ընտրութիւններին այդքան ընտրուողների ձայնը ոչնչանում էր շնորհիւ «երեքդասեան ընտրական սիստեմի»: Դուրս էր գալիս որ 1,600,000=0:

Կարողութեան ցենզ ընտրութեան համար, աւելի կայ պակաս չափով, գոյութիւն ունի նաեւ Լեքտայիտ ուրիշ երկիրներում: Անգլիայում, օրինակ, պարլամենտական ընտրութիւններին (համայնքների պալատի համար) մասնակցելու իրաւունք ունեն նրանք, որոնք ունեն՝ կամ կապալով են վերցրել անշարժ սեփականութիւն կամ գոնէ բնակարանի վարձ են տալիս տարեկան առնւազն 100 րուբլի:

Հետեանքը այն է լինում, որ միլիոնաւոր չափահաս քաղաքացիներ—սեփական բնակարան չունեցող, այլ օր. ծնողների մօտ ապրողներ, չքաւոր բանասերներ, կոհաւորած սենեակներում ապրողներ, և այլն քղելում են ձայնաւորութեան իրաւունքից:

Այսպիսի ցենզային սահմանափակումների հետեւանքով օրինակ 1898-ին Անգլիայում չափահաս ընտրողների թիւը հասնում էր միայն $6\frac{1}{2}$ միլիոնի, այն ինչ նոյն թիւն Ֆրանսիայում (մօտաւորապէս նոյն չափ ազգաբնակչութեամբ) ընտրողների թիւը $10\frac{1}{2}$ միլիոնի էր հասնում:

Շեղիայում ընտրական իրաւունք ունեն միայն

նրանք, որոնք տէր են առնւազն 6,000 քրոն արժէք ունեցող անշարժ կայքի կամ այնպիսի կարողութեան, որ բերում է տարեկան առնւազն 800 քրոն եկամուտ:

Շւեդիական ուրիշ երկիրներում ևս՝ Քելգիայում, Ռումինիայում, Սերբիայում, Հոլանդիայում, Ունգարիայում, ընտրողներից պահանջւում է աւելի կամ պակաս չափով կարողութեան ցենզ: Նոյնպիսի ցենզ էր պահանջւում յեղափոխութիւնից առաջ նաեւ Ռուսաստանում՝ Պետական Դումայի, զեմստոյական և քաղաքային ինքնավարութեան ընտրութիւններին մասնակցողներից:

Ակներեւ բան է, թէ որչափ անմիտ և անարդար բան է ընտրութիւններին պահանջել կարողութեան ցենզ: Հայրենիքին և ազգին ծառայում են՝ ամենքը անխտիր, —իրաւագործները ևս առաւել: Պատերազմի ժամանակ ցենզ չեն պահանջւում, աշխատաւոր գիւղացու և բանւորին կուի դաշտ են ուղարկում, իսկ ընտրութիւններին նրանց զրկում են ձայնից:

Կարողութեան ցենզին նման է, կամ, աւելի ճիշտ. սաստ, նրա միւս կողմն է իրական ցենզը:

Կան երկիրներ, (օրինակ մի քանի ամերիկական շտատներում) ուր ընտրութիւններին մասնակցելու համար կրթական ցենզ է պահանջւում: Այսպէս Իտալիայում մինչև 1912 թ. պահանջւում էր առնւազն տարրական դպրոցի աւարտման վկայական:

Ասում են՝ պետական գործերը այնքան բարդ են և դժւարեմբռնելի, որ ամեն ոք չի կարող հասկանալ նրանց նշանակութիւնը, և անկիրթ մարդը կարեւոր գիտակցութեամբ չի մասնակցի ընտրութիւններին: Վերոյիշեալ Միլլը, որ պաշտպանում է կարողութեան ցենզը, պաշտպանում է նաեւ կրթական ցենզը: Նա ասում է. «Են չեմ կարող թոյլ տալ որ թւաբանու-

թեան օրէնքները չիմացող և անգրագէտ մարդը մասնակցէ ընտրութիւններին»։ Մեղալի մի երեսը կարողութեան ցենզն է, իսկ միւս երեսը՝ կրթական ցենզը։ Ունեցող մարդիկ կամ նրանց զաւակները աւելի հարաւորութիւն ունեն կրթութիւն ձեռք բերելու։ Երբ մի երկրում համալսարանականին աւելի իրաւունք է տրուում ընտրութիւններին, այդ նշանակում է, թէ հարուստի է առաւելութիւն տրուում։

Սխալ է կարծել, թէ տգէտ գիւղացուն նախ պիտի կրթել, ապա նրան ընտրողական իրաւունք տալ։ Այդ է եղել բոլոր տեղերի և բոլոր ժամանակների յետագէտ հայեացքների տրամաբանութիւնը։

Եթէ անդրագէտ աշխատաւորները սպասեն, մինչև որ «տէրերը» կրթեն նրանց, շատ ժամանակ կանցնի։ Իսկ այդ տէրերը շահ չունեն իրենց շահագործման ենթակայ աշխատաւորների միտքը բանալու։

Ստրուկների ազատութեան ժամանակ էլ Ամերիկայում նրանց «տէրերը» նոյնն էին ասում թէ նախ հարկաւոր է զարգացնել ստրուկներին, ապա ազատել նրանց. այժմեան ստրուկները չեն կարող օգտուել ազատութեան բարիքներից։ Տէրերին որ մնար՝ նրանք ոչ «նախ» կզարգացնէին իրենց ստրուկներին և ոչ էլ «ապա» ազատութիւն կտային նրանց։ Ռուսաստանի ճորտերը ազատուելով՝ կարողացան ապրել առանց իրենց «հայրախնամ» տէրերի հսկողութեան։ Այժմ էլ քաղաքական ազատութիւն ձեռք բերած «տգէտ ժողովուրդը» կարողանում է օգտուել իր իրաւունքից։

Հարկաւոր է նաև մատնանիշ անել այն հանգամանքի վրայ, որ նոյն տգէտ գիւղացիները արդէն իսկ մասնակցելով գիւղական, համայնական և պետական ընտրութիւններին՝ կարողանում են օգտուել իրենց

իրաւունքից։ Գիւղացին լաւ է իմանում պաշտպանել իւր շահերը։

Վերջապէս, եթէ տգէտ մասսաները չունենան պարլամենտում իրենց ներկայացուցիչները, հապա ռվ պիտի պաշտպանէ այնտեղ նրանց տնտեսական և կուլտուրական շահերը. ռվ պէտք է ազատէ գիւղացուն հարկերի ծանրութիւնից և մոռալ խաւարից. ռվ պիտի աշխատէ տարածել երկրում ընդհանուր պարտադիր ուսում, որ էլ անգրագէտ չմնայ, որին ընտրական իրաւունքից զրկելու մասին մտածեն արտօնեալները։

Կրթական ցենզն էլ ուրեմն մի սահմանափակումն է ընդհանուր ընտրական իրաւունքի մէջ և պէտք է վերացնել այն՝ ուր նա գեռ գոյութիւն ունի^{*)}։

Մի ուրիշ տեսակ ցենզ էլ այն է, որ եւրոպական շատ երկրներում ընտրողից պահանջուած է, որ նա մի որոշ ժամանակ ապրած լինի իւր ընտրական շրջանում (նստակեցութեան ցենզ)։ Ֆրանսիայում պահանջուած է 6 ամիս, Անգլիայում՝ 1 տարի, Շվեյցարիայում՝ 3 ամիս, ուրիշ տեղեր՝ 1—2—3 տարի։

Այս անմիտ սահմանափակումն էլ պատճառաբանուած է նրանով, թէ մարդ մի առժամանակ ապրած լինելով իւր ընտրական շրջանում՝ կարող է ծանօթ լինել տեղի պայմաններին և գիտակցաբար ընտրել։

Ի՞նչ է այդ սահմանափակումը, եթէ ոչ ցենզային արտօնութեան մի ուրիշ կողմը։ Յիշաւի։ Ռվ է ստիպւած լինում յաճախ թողնել իւր տունն ու տեղը և ուրիշ վայրեր երթալ՝ աշխատանք որոնելու, եթէ ոչ աշխատաւորը։ Մասնաւոր ներկայ ժամանակում,

^{*)} Խաաիայում 1900 թ. ընտրութեան ժամանակ ընտրական յանձնաժողովը աշխարհահռչակ գրող Ամիշիսի անունը ընտրական ցուցակի մէջ չմուծեց նրա համար, որ նա չէր ներկայացրել իր դպրոցական վկայականը։

տնտեսական զարգացման շնորհիւ, գելդերից և փոքր քաղաքներից հաւաքին թւով աշխատաւոր ձեռքեր են դիմում դէպի քաղաքները՝ հացի կտոր վաճառակելու նպատակով. մի համայնքից միւս, շատ անգամ մեծ քաղաքի մի թաղից միւսը տեղափոխուելով՝ նրանք չեն ունենում հաստատուն բնակավայր. էլ չեն ասում այն մշտական շրջմութիւններին, (Sachsehgänger), որոնք բախտից հալածւած ամբողջ կեանքում մի տեղից միւսն են շրջում:

Ո՛րչափ շատ է այն բանւորների թիւը*), որոնք մեր ժամանակի արդիւնագործական կենդրոններում պատահմամբ միայն ընկել են աշխատանք գտնելու. հառաքին թիւ են կազմում նաեւ այն բանւորները, որոնք աշխատում են երկաթուղիների, նաւերի և ուրիշ տեսակ փոխադրական գործերում: Յիշած սահմանափակման շնորհիւ այս կատեգորիայի բոլոր աշխատաւորները զրկւում են ձայն տալու իրաւունքից, քանի որ նրանք երբէք երկար ժամանակով մի տեղ չեն բնակւում:

Ուրեմն այս ցենզն էլ ուղղւած է դարձեալ ժողովրդի աշխատաւոր, չքաւոր խաւերի դէմ. նա ևս հանդիսանում է մի տեսակ կարողութեան ցենզ:

Բոլորովին աւելորդ է այդ ցենզը: Թէ մարդ որ տեղ է ապրում—գելդում թէ քաղաքում, մի ժամանակ մի տեղ, յետոյ ուրիշ տեղ,—այդ բոլորովին չի խանգարում, որ նա իրաւունք ունենայ ընտրութիւններին մասնակցելու: Ընտրողը շատ լաւ գիտէ, թէ ով է ժողովրդի ճշմարիտ բարեկամը, հետեալէս՝ թէ ով պիտի ձայն տալ. չէ՞ որ նա անդամ է որոշ կուսակցութեան, որի թեկնածուների անուններն իմանալուց

*) Սյգալիսիների թիւը Լոնդոնում հաշւում են մօտ 2 միլ.

հեշտ բան չկայ: Վերջապէս, ինչու պէտք է այդ ցենզը հնարել հէնց այն դէպքում, երբ միլիոնաւոր աշխատաւոր մարդկանց իրաւունքից զրկել հարկաւոր է: Հապա երբ հարկաւոր է հարկ աւելի աշխատաւորներին՝ միթէ նրանք խաթր կանեն և նրանցից հարկ չեն առնի մինչև «որոշ» ժամանակ: Դեռ աւելին: Երբ հարկաւոր է պաշտպանել հայրենիքը, որի անունով ճառում են միշտ արաօնեալները, միթէ դիւտոր չեն կանչի աշխատաւորներին. մինչև որ նրանք «որոշ» ժամանակ մի համայնքում հաստատուն բնակութիւն ունեցած չլինեն:

Ձէ. կեղծ ու նենգապատիր միջոց է այդ ցենզը՝ ուղղւած միլիոնաւոր աշխատաւորների դէմ. հարկաւոր է վերջ տալ ստորացման այդ միացորդներին:

Յենգային սահմանափակման մի յոգնեքից օգտուղներ այն է, որ հասարակական միջոցներից օգտուղներ զրկւում են ընտրական իրաւունքից (Սնգլիա, Գերմանիա, Ֆրանսիա): Դրանց մեծագոյն մասը կազմում են աշխատողուրկ ինւալիդ կամ ծերացած բանւորներ: Սյս զէպքում էլ իրաւազուրկ են դառնում աշխատաւորները:

Սյս իրաւազրկութեան սկզբունքը գտնում է իւր պաշտպանները. «Նա, որ չէ կարող սեփական աշխատանքով գոյութիւն պահպանել, այդպիսին իրաւունք չունի ուրիշի փողերը յօգուտ իւր կարգադրել» (Ջոն Սո. Միլլ):

Բուրժուական իդէօլոգները մոռանում են միշտ, որ աշխատելու հնարաւորութիւն չունեցող ապարախտները զոհ են միայն բուրժուական կարգերի, որ նրանց աշխատանքի ոյժը հարստահարել-ցամաքացրել են այժմ նրանց իրաւազուրկ անող տէրերը: Կարծէք իրանց տնտեսական գծրախտութիւնը հերիք չէ, կամե-

նում են հասարակական գործերին մասնակցելուց էլ զրկել:

Անտեղի չի լինիլ ցոյց ապու համար Միւր նման դատողների կարծիքի անհեթեթութիւնը, առաջ բերել հետեւեալ կուրեօղը, որ պատմում է յայտնի իւր-լանդացի Օ'Կաննի: Մի իրլանդացի—ասում է նա,—մի էշ ունէր, որով նա իւր օրական պարէնն էր հայթայթում. բայց տես, որ էշը սատկեց, և իրլանդացին մնաց պարապ ու ստիպւած եղաւ հասարակական օգնութեան զիմել, որի շնորհիւ էլ նա զրկեց ընտրական իրաւունքից: Օ'Կաննիւր հարցնում է. այս դէպքում ո՞վ ունէր ընտրական իրաւունք,—մօրդը, թէ՞ էշը:

Ընտրական իրաւունքից զրկւում են բոլոր երկիրների զինուորականները: Այս հանգամանքը պատճառաբանում է նրանով, թէ զօրքը բոլորովին առանձնացած մի կաստա է, իր սեփական զիսցիպլինով և կանոններով, նա պէտք է հեռու պահէ իրեն կուսակցութիւններից, այլապէս կարող է հեշտութեամբ կորցնել կարգապահութիւնը և խռովութիւնների աեզիր տալ: Ասում են նաև, թէ զինուորները ըստ մեծի մասին կզանան սոսկ գործիք իրենց հրամանատարների ձեռքին, սբանց ցանկացած մարդուն էլ ձայն կտան: Հասարակապետական-դեմոկրատական երկիրներում բացի այդ երկիրը են կրում, թէ մի գուցէ մի անւանի զենեւալ փառաւիրութեամբ զօրքը իւր կողմը քաշէ և նորից ստեղծէ ցարիզմ:

Հէնց այն հանգամանքը, որ կառավարութիւններն են արգելում զինուորներին մասնակցել ընտրութիւններին, հէնց այդ բանը պէտք է մեր մէջ կասկած զարթեցնէ արգելման շարժառիթների վերաբերմամբ:

Զպէտք է բնաւ հաւատալ, թէ կառավարութիւնը իւր զօրքով ուզում է «բարձր մնալ կուսակցութիւնե-

րից»: Իրողութիւնն այն է, որ վախենում է զինուորականների մասնակցութիւնից ընտրութիւններին: Ընտրութիւնները լաւագոյն դպրոց են քաղաքական հասունութիւն ձեռք բերելու համար: Վերջ ի վերջոյ զօրքը այդ ճանապարհով ձեռք կ'ընեն զիտակցութիւն, նա կճանաչէ իր ճշմարիտ բարեկամին ու թշնամուն և ըստ այնմ էլ զիրք կ'ընէ, մանաւանդ որ զօրքի մեծագոյն մասը աշխատաւոր, ճնշւած տարրերից է: Ներկայումս Ռուսաստանում, շնորհիւ Յեղափոխութեան զինուորները վայելում են ընտրական իրաւունքը:

Այս չարիքի առաջն առնելու համար բոլոր երկիրների սոցիալիստական կուսակցութիւնները ցոյց են տալիս մի արմատական միջոց,—վերացնելու մըշտական զօրքը և մտցնել միլիցիա. դրանով էլ վերջ տրւած կ'ըլինէր յիշեալ սահմանափակմանը:

Նաև պետութեան պաշտօնական (չինովնիկները) սահմանադրական երկիրներում զրկւում են պատիւ—և ոչ աւտիւ—ընտրական իրաւունքից: Այս էլ կատարւում է երկու կերպ: Մի քանի երկիրներում իսպառարգելւում է ընտրել չինովնիկներին իբրև ժողովրդական ներկայացուցիչ. ուրիշ երկիրներում այդ թոյլատրւում է, սակայն միայն այն պայմանով, որ ընտրւածը, եթէ համաձայն է լինել ժողովրդական ներկայացուցիչ, պիտի հրաժարւի իր նախկին պաշտօնից:

Չինովնիկներին պատիւ ընտրողական իրաւունքից զրկելը պատճառաբանւում է երկու կերպ: Առաջին՝ ասում են, թէ պաշտօնեաների մասնակցելը առաջ կբերէ զիսցիպլինայի խանգարում. անյարմար բան է միանգամայն, որ ստորադրեալ չինովնիկը հանդէս գայ պարլամենտում և իրեն ստորադրող մի-նիստրների կամ ուրիշ պետական մարդկանց հետ քաղաքական պայքարի մէջ մտնի, քննադատէ վերջին-

ների առաջարկած օրինագծերը: Աւելի կարևոր պատճառաբանութիւնն այն է, թէ օրէնսդիր, դատական և գործադիր մարմինները աւտօնօմ պիտի լինեն, հետևապէս՝ չինոքիւնները, գործադիր մարմնի անգամները, չեն կարող մասնակցել օրէնսդիր ժողովում:

Առաջին պատճառաբանութեամբ կառավարութիւնն է արգելք հանդիսացող, երկրորդ պատճառաբանութիւնը՝ երրեւն ժողովրդական ներկայացուցիչներն են անում, — օրինակ Անգլիայում. օրէնսդիր մարմինը կամենում են ազատ պահել արքայական ոտնձգութիւններից՝ նրա գործիք չինոքիւնութեան միջոցով:

Իսկական ուսմկավար պետութեան հոգսերից մէկը պիտի լինի նաև այդ արգելքի առաջն առնելը: Այդ սահմանափակումն ևս այժմ Ռուսաստանում վերացւած է:

Ինչպէս զօրքը, այնպէս էլ չինոքիւնութիւնը պէտք է գլխովին վերափոխել, նրանց մօտեցնել հասարակութեան միւս խաւերին, ոչնչացնել կաստայական շահերը և կարգերը:

Ընդհանուր ընտրական իրաւունքի դէմ գնալ կը նշանակի նաև՝ ալլաքեղ եւ ալլաքիօն տարրերին զրկել ձայն տալու իրաւունքից: Շատ երկիրներում մանաւանդ Ռուսաստանում՝ ապրում են բազմաքեղ ժողովուրդներ իրենց յատուկ կրօններով:

Ռուսաստանում Յեղափոխութիւնից առաջ շատ հալածւած էին փոքր ազգերը. օրինակ հրէաներին ոչ միայն զրկում էին քաղաքական-հասարակական գործերին մասնակցելու իրաւունքից, այլ և մինչև իսկ արգելում էին որոշ սահմաններից դուրս ապրելը: Զրկանքի և հալածանքի ենթակայ էին նմանապէս ուրիշ ժողովուրդներ, նոյն իսկ ոչ-պրաւօսլաւ ուսմները (սեկ-

տանտները և այլն): Դուխօբորների և ուրիշ աղանդաւորների կրած հալածանքները Ռուսաստանում՝ ամենքին յայտնի են:

Այդ հալածանքի մի տեսակն էր նաև այն, որ փոքր ազգերի ընտրական իրաւունք գոյութիւն չունէր բոլորովին և կամ շատ սահմանափակւած էր: Հայերս, օրինակ, մեր թւին նայելով՝ իրաւունք պիտի ունենայինք Պետական Դումա ուղարկելու 8—9 պատգամաւոր, այն ինչ մեղ մէկ տեղ էր տւած այնտեղ:

Այս բոլորի անարդար լինելը ակնյայտ է: Ամենքն էլ պետութեան քաղաքացիներ են, ամենքն էլ հարկ են վճարում, գինւոր են տալիս, հետևապէս ամենքն էլ պէտք է օժտւած լինեն համահաւասար իրաւունքներով: Զպէտք է մոռանալ նաև այն, որ այդ ալլաքեղ ժողովուրդներից շատերը անցեալում ունեցել են իրենց սեփական պետութիւնը, եղել են անկախ և ազատ տէրեր իրենց երկրի. միայն ժամանակի ընթացքում նրանց հայրենիքը զրաւել և Ռուսաստանի մաս է դարձել. կնշանակէ նրանք բարոյական և պատմական իրաւունք ևս վայելում են պետական գործերին մասնակցելու:

Բացի յիշած բոլոր սահմանափակումներից պիտի յիշել նաև կանանց ընտրական իրաւունքից զրկելը: Մարդկութեան ամբողջ կէսը զրկել իրաւունքից և այդպիսով խոչընդոտ հանգիստանալ հասարակական յոռօշաւթիմութեան՝ դրանից աւելի երկինք աղաղակող անարդարութիւն և բռնութիւն չկայ:

Կանանց ընտրական իրաւունք տալուն դէմ եզոդները այդ ջանք փաստաբանում են նրանով, թէ կինը անընդունակ է պետական հասարակական գործերին մասնակցելու. ասում են, թէ «բնական» է կնոջ համար ֆիալ տանը, զբաղւել միայն բնտանեկան գործե-

ըով, տնային սնտեսութեամբ: «Տղամարդը պատկանում է հասարակութեանը, իսկ կինը՝ ընտանիքին», ասում Գ. Մայեր*): Ասում են՝ եթէ կինը մասնակցէ քաղաքական գործերին, նա կը զրկւի կանացի, իր սեռին յատուկ, քնքշութիւնից: Վերջապէս ասում են, թէ կանայք աւելի պահպանողական են, աւելի ենթակայ կղերի ազդեցութեանը, հետեապէս, եթէ նրանց իրաւունք տրւի ընտրելու և ընտրւելու, այն ժամանակ նրանք աւելի յետադէմ տարերին կաշակցեն: Այս է շատ, երբեմն մինչև իսկ ձախակողմեան «քաղաքագէտների» վերջին փաստարանութիւնը:

Այսպէս, Անգլիայում կանանց ընտրական իրաւունքի դէմ են եղել, երկար ժամանակ, ազատամիտները: Ֆրանսիայում ևս յաճախ շատ արմատականներ և սոցիալիստներ կանանց ընտրական իրաւունքին դէմ են արտայայտւել: Նոյն պատճառարանութեամբ էր, որ 19-րդ դարի վերջին Բելգիայում երբ կղերական կառավարութիւնը կանանց ուզում էր ընտրական իրաւունք տալ, սոցեալ-դեմոկրատ կուսակցութիւնը վճռապէս դէմ գնաց դրան: Յետոյ նա փոշմանեց այդ սխալ քայլի համար, բայց արդէն ուշ էր:

Սակայն յիշեալ բոլոր պատճառարանութիւններից և ոչ մէկը չէ դիմանում թոյլ քննադատութեան անգամ:

Ո՞վ ասաց, թէ կանայք անընդունակ են. միթէ քիչ են՝ եղել և քիչ կան յայտնի հասարակական կին գործիչներ. եթէ, աղամարդկանց հետ համեմատած, նրանք չեն տւել յայտնի քաղաքական տաղանդներ, միակ պատճառն այն է, որ նրանք իրաւագործի են եղած, հնարաւորութիւն չեն ունեցել զարգացնելու

*) Ընտրական իրաւունք, էր. 445.

իրենց մտաւոր ոյժերը: Միթէ քիչ է այժմ այն կանանց թիւը, որոնք աւարտել են միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ, պարագում են բժշկութեամբ, ուսուցչութեամբ, առեւտրական և ուրիշ գործերով, ուր ցոյց են տալիս աղամարդուց ոչ պակաս արդիւնք: Քիչ է այն կանանց թիւը, որոնք գործարաններում, արհեստանոցներում և ուրիշ աշխատավայրերում օրն ի րուն քրտինք են թափում և իրենց օրւայ պարէնը հայթայթում: Ո՞ւր են այդ դէպքում այն կեղծաւոր փարիսեցիները, որոնք «անբնական» են համարում կնոջ համար տանից դուրս զբաղւելը, որոնք ասում են «կինը պատկանում է ընտանիքին»: Ինչո՞ւ կապիտալիստ վաշխառուները կանանց ամուսիններին այնքան վարձ չեն տալիս, որ նրանք կարողանան ընտանիք պահել և իրենց կնոջ համար անային աշխատանքներ թողնել:

Մեզ չէ հետաքրքրում նաև այն, թէ արդեօք կանայք աւելի պահպանողական են թէ ազատամիտ. կընոջ մէջ մենք ուզում ենք յարդել մարդուն և ոչ այս կամ այն քաղաքական համոզմունքը: Այդպէս որ լինէր՝ դէ ամենից առաջ ձայնի իրաւունքից պէտք էր զրկել այն յետադէմներին, որոնք կանանց ձայնի իրաւունքից զրկելն են փաստարանում:

Միայն է ասել, թէ կինը չէ կարող յառաջադէմ քաղաքական — հասարակական գործիչ լինել: Անցեալը և ներկան հակառակն են ցոյց տալիս: Ո՞ւր յայտնի չեն Բրեշկօ-Բրեշկովսկայայի, Մարիա Սպիրիդոնովնայի և նման հերոս կանայք, որոնք ամբողջ հոգով տոգորւած են ծառայելու իրենց ժողովրդին՝ քաղաքական — հասարակական առաւարիդում:

Անարդարութիւն է մի համալսարանական, կրթւած կնոջ զրկել ընտրական իրաւունքից հէնց նրա

համար, որ կին է, իսկ այդ կնոջ տղամարդ ծառային, որ թէկուզ անգրագէտ է, տալ ձայնի իրաւունք, որովհետեւ տղամարդ է:

Անարդարութիւն չէ՞ աչքաթող չանել կանանց, երբ հարկաւոր է նրանցից հարկ վերցնել, երբ հարկաւոր է շահագործել նրանց էժան աշխատանքը, և աչքաթող անել նրանց՝ երբ հարկաւոր է նրանց ձայնից զրկել: Ո՞վ պէտք է հապա ժողովրդական Զեբկայացուցչութեան մէջ պաշտպանել նրանց, իրաւագործիներին, շահերը: Ինչո՞ւ ամեն մի դասակարգ կարող է ունենալ իր ներկայացուցիչները պարլամենտում, իսկ կանայք՝ ոչ:

Չպէտք է մոռանալ այն հանգամանքը, որ օրէնսդրական շատ ակտեր վերաբերում են մասնաւորապէս կանանց, որոնք և, ուրեմն աւելի օգտակար կլինեն նրանց մշակելու խնդրում: Դրանք են ամուսնութեան, երեխաների պաշտպանութեան, դատարարակութեան և այլ ինքիւրներ:

Վերջապէս ո՞վ իրաւունք տւեց տղամարդկանց՝ կանանց վերաբերմամբ զրկողի և դատաւորի դերը ստանձնել. ինչ իրաւունքով տղամարդն անում է այդ հապա եթէ կինը այդպէս վարւելու լինէր տղամարդու վերաբերմամբ. ինչո՞ւ մարդկութեան ամբողջ կէսը մատնել անգործութեան:

Մեր ժամանակի ամենաթանգազին սեփականութիւններից մէկը մարդու ազատութիւնն է: Թույլ տւեք նրան, տղամարդ է նա թէ կին, այդ միեւնոյնն է, որ զարգացնէ, լարէ իր ոյժերը հասարակութեան ծառայելու համար: Կեանքը, գործը ցոյց կտայ հետեւանքը. անկարողները յետ կմնան անխտիր, տղամարդ լինեն, թէ կին:

Կանանց ազատագրութեան հարցը իր պատկաւս-

լի անցեալը ունի: Այժմ լուսաւոր երկիրներում անդուլ կոխ է մղւում այդ արդար դատի համար: Մինչև որ կինը չստանայ քաղաքական իրաւունքներ՝ նա չի կարող իրեն վերջնականապէս ազատագրել ստրկացման միւս մնացորդներից: Եւ մենք տեսնում ենք, որ այդ դատը տանում է կամաց-կամաց իր յաղթանակը: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների մի քանի շտատներում, Աւստրալիայում և Նոր Զելանդիայում կանայք դեռ 19-րդ դարի վերջին ձեռք են բերել ընտրական իրաւունք:

Համեմատաբար աւելի ուշ, մեր օրերում, կանանց ընտրական իրաւունքը սկսեց յաղթանակներ տանել նաև Եւրոպայում: Առաջին երկիրը, որ գեղեցիկ օրինակը տւաւ մեծ պետութիւններին, դա փոքրիկ Ֆինլանդիան էր: 1906 թւականից սկսած Ֆինլանդիայի կանայք իրենց պարլամենտի (սէյմի) ընտրութիւններին մասնակցում են ոչ միայն իբրև ընտրող, այլև իբրև ընտրւող: Մէյմի 200 անդամների թւում 15—20 հոգի սովորաբար լինում են կանայք: 1907 թ.-ից սկսած կանայք ընտրական իրաւունք են վայելում Նորվիգիայում: Համաշխարհային պատերազմի միջոցին (1915 թ.) կանայք ընտրական իրաւունք ձեռք բերին Իանիսլայում: Ռուսաստանի Մեծ Ֆեդախոխութիւնը (1917 թ.) ուրիշ ազատութիւնների հետ միասին կանանց ևս ընտրական իրաւունք շնորհեց: Կանայք այժմ մասնակցում են քաղաքային ընտրութիւններին, մասնակցելու են նաև Սահմանադիր ժողովի ընտրութիւններին: Վերջապէս՝ հէնց վերջերս (10 յունիսի 1917 թ.) հեռագիրը լուր բերեց, որ Անգլիայում ևս պարլամենտը ընդունել է կանանց ընտրական իրաւունք տալու օրինագիծը:

Ամեն տեղ փորձը ցոյց է տւել, որ ուր էլ որ

ընդունւած է կանանց ընտրական իրաւունքը, հետեանք-ները եղել են բարեբար և արդիւնաշատ: 1910 թւին էր, որ Աւստրալիայի պարլամենտը համարեա միա-ձայն այս բանաձևն ընդունեց.

«Քաղաքական իրաւունքների տարածումը կանանց վրայ, տղամարդկանց համահաւասար, Աւստրալիայում տւաւ ամենալաւ հետեանքները: Պարլամենտը սկսեց մեծ ուշադրութեամբ վերաբերել բոլոր այն խնդիրներին, որ վերաբերում են կանանց և երեխաներին: Միևնոյն ժամանակ՝ կանայք մեծ հետաքրքրութեամբ են վերաբերում քաղաքական ուրիշ խնդիրներին: Ինչ վերաբերում է երկրի պաշտպանութեան խնդրին, այդտեղ ևս կանայք ըստամենայնի ցոյց տւին նոյն հետաքրքրութիւնը, ինչ որ՝ տղամարդիկ և նոյնպիսի կարողութիւն՝ թափանցելու այդ բարդ խնդիրների մէջ: Եւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ կանանց ընտրական իրաւունքի ներմուծումը միայն բարիք է հանդիսանում, չնայած որ շատերը կործանարար էին համարում այդ, մենք յարգոյաբար դիմում ենք բոլոր ժողովուրդներին, որ իրենց երկրում ևս տարածեն կանանց ընտրական իրաւունքը»:

Երբ մենք պահանջում ենք ընդհանուր ընտրական իրաւունք, այդ դէպքում ի նկատի ունենք, ի հարկէ միայն չափաւասներին:

Սակայն հարց է՝ մարդ որ հասակից պիտի համարի չափահաս: Այստեղ է ահա, որ տարբերում են Կարծիքները: Բնորոշ է այն, որ բոլոր երկիրների արտօնեալ դասակարգերը ընտրական իրաւունք վայելելու համար պահանջում են աւելի մեծ տարիք, քան ռամկավար կուսակցութիւնները:

Այս էլ՝ շատ պարզ պատճառով: Քանի դեռ մարդ երիտասարդ է, չկաշկանդւած ընտանեկան, պաշտօնա-

վարութեան և այլ տեսակի հոգսերով, նա աւելի է ազատասէր է, արմատական, աւելի է թեքւած դէպի քաղաքական ազատ միջնորոտը. իսկ երբ նա անցնում է 25 տարին, ամուսնանում է, կապւում է ընտանիքի հետ դառնում է աւելի դանդաղաշարժ, պակաս ազատասէր. պայմաններն են առաջացնում այդ: Երբ մէկը պաշտօն, կապեր ունի իր գործատիրոջ հետ, նա հեշտութեամբ յանձն չի առնի կուտղի, պայքարողի դերը. այլ շատ անգամ կյարմարի, ձայն կտայ նրան, որ հաճելի է իր «խաղէկինին»:

Բացի այդ ապացուցւած վրաս է, որ աշխատաւորները և առհասարակ խեղճերը աւելի քիչ են ապրում, քան ունեւորները և բարեկեցիկները: 100 աշխատաւոր եթէ վերցնենք, երիտասարդները՝ աւելի կլինեն և պակաս քան մեծերը, իսկ 100 բուրժուա որ վերցնենք, դրանց թւում մեծերը համեմատաբար աւելի կը լինեն: Այս նշանակում է, որ պակաս տարիքի ցենզը բուրժուազիայի համար աւելի ձեռնտու է:

Այս տեսակէտից էլ քաղաքական հասնութեան համար պէտք է ընդունել նոյն տարիքը, ինչ որ քաղաքացիական հասնութեան համար—20 տարեկան հասակը: Եթէ մէկը, այդ տարիքին հասնելով, իրաւունք ունի սեփական գործ սկսելու, առևտրական և այլ տեսակի գաշինքներ կուրու, եթէ նա կարող է գինւոր դառնալ, ինչպէս չի կարող նոյն հասակին գիտակցաբար կատարել նաև իր պարտականութիւնները պետութեան վերաբերմամբ: Բոլոր դեմոկրատ կուսակցութիւնները պահանջում են ընտրական իրաւունք տալ 19—20 տարեկան հասակից սկսած:

Այսպէս չէ սակայն միշտ իրականութեան մէջ, մանաւանդ յետագէմ երկիրներում: Քաղաքական հասնութեան համար Աւստրիայում, Պրուսիայում,

Սերբիայում պահանջուժ է 24 տարեկան լինել: Բելգիայում, Հոլլանդիայում, Դանիայում, Նորիգիայում, Փերմանիայում, նաև առաջ՝ ռուսական Պետական Դումայի համար 25 տարեկան, իսկ Դանիայում մինչև 1915 թիւը պահանջուժ էր 30 տարեկան հասակի ցենզ: Ընդհանրապէս աւելի ազատ պետութիւններում ընտրական իրաւունք ունեն 21 տարեկանները արդէն (Ֆրանսիա, Անգլիա, Միացեալ-Նահանգներ և այլն): Ունեզարիայի պարլամենտին, ինչպէս նաև Շեյքարական դաշնակցական խորհրդին մասնակցելու համար պահանջուժ է 20 տարեկան հասակ, իսկ առանձին կանտոնների ընտրութիւնների համար՝ նոյն իսկ 19—17 տարեկան հասակ: Ռուսաստանում ևս այժմ ընտր. իրաւունք ունեն սկսած 20 տարեկանից:

Այն ևս կայ, որ մի քանի երկիրներում աւելի բարձր տարիք է պահանջուժ պատսիւ ընտրական իրաւունք վայելելու համար, քան սկստիւ: Ֆրանսիայում՝ 25 տար. (սկստիւ 21 տար.), Աւստրիայում, Բաւարիայում և Պրուսիայում 30 տարեկան: Աւստրիայում պահանջուժ է նոյնիսկ, որ պատսիւ ընտրական իրաւունք վայելողը երեք տարի չարունակ միեկնոյն համայնքում ապրած լինի: Պորտուգալիայում այդպիսիներից պահանջուժ է, որ ունենան տարեկան առնուազն 2,200 ֆրանկ զուտ եկամուտ:

Ակնյայտ է, որ միանգամայն աւելորդ է այս սահմանափակումը: Երբ քաղաքական հասունութեան է հասել՝ նշանակուժ է որ նա կարող է և ընտրել, եթէ ժողովուրդը ցանկանում է նրան ընտրել, ինչու զրկել ժողովրդին երիտասարդ, թարմ ներկայացուցիչներից: Չմոռանանք, որ Գլադստոնը 22 տարեկան էր,

երբ նա անգլիական պարլամենտի յայտնի անդամներից մէկն էր:

Ըստ երևոյթին այնքան էլ մեծ նշանակութիւն չունի այս տարբերութիւնը: Սակայն այդ սխալ է: Դրադուսկին*) հաշուել է, որ 21—25 տարեկան ունեցող ազգաբնակութիւնը կազմում է բոլոր ընտրողների 15⁰/₁₀, ուրիշ խօսքով՝ հարցը վերաբերում է հարիւր հազարաւոր և միլլիոնաւոր երիտասարդ ընտրողների:

Ընդհանուր ընտրական իրաւունքը, ինչ խօսք, չէ պահանջում անխտիր ամենքի մասնակցութիւնը ընտրութիւններին: Շատ պարզ է, որ երեխաները և ընդհանրապէս անչափահասները չեն կարող գիտակցել այդ իրաւունքի նշանակութիւնը: Նմանապէս հոգեկան ճիւղակներ, որոնք զրկւած են գիտակցական կեանք վարելուց, չեն կարող ընտրութիւններին մասնակցել: Նաև այն մարդիկ, որոնք դատարանով ճանաչւած են իբրեւ յանցագործներ (աւագակութեան, ընտրողների կաշտոնիւ համար, և այլն), նրանք ևս չպէտք է ընտրեն: Պարլամենտական ընտրութիւններին մասնակցել չեն կարող նաև օտարմիտակներ:

Ընդհանուր ընտրական իրաւունքը համարւում է հրամայողական պահանջ բոլոր ռամկավար կուսակցութիւնների ծրագիրներում: Այդ ճանապարհով էլ, աշխատաւոր մաստանների քաղաքական կուլի ազդեցութեան տակ, տառջ է գնում արեւմտեան ազատ երկիրների ներկայացուցչութիւնը: Ընդհ. ընտրական իրաւունք գոյութիւն ունի արդէն Մ.-Նահանգներում, Շեյքարիայում, Ֆրանսիայում, Փերմանիայում (ռայ-խստագի համար) Նորիգիայում, Իսպանիայում: 1907 թ.-ին ընդհանուր ընտր. իրաւունք մտցրեց Աւստրիա-

*) „Государственное право важнейшихъ европейскихъ державъ“, стр. 321.

յում, 1912 թ. Իտալիայում, իսկ 1917 թ. — Ռուսաստանում: Անգլիայի պարլամենտն էլ արդէն ընդունել է ընդհանուր ընտր. իրաւունքի օրինագիծը:

Այսպէս ուրեմն, ընտրական իրաւունքը պիտի լինի անպատճառ բնութանու, այդ են պահանջում ժողովրդի ճշմարիտ շահերը: Չպէտք է տարբերութիւն դնել ազնւականի և քաղաքացու, կալաժառարկի և գիւղացու, բուրժուայի և բանուորի, կնոջ և տղամարդու ինչպէս նաև տարբեր ազգութիւնների ու կրօնների պատկանողների մէջ — ամենքին էլ անխտիր պէտք է իրաւունք տալ թէ ընտրելու և թէ ընտրելու: Չէ որ տարբեր դասակարգի և սեռի անդամները անխտիր՝ անհրաժեշտ գործօններ են պետական կեանքում: Քանի որ բոլորն էլ ծառայում են հայրենիքին, ունեն իրենց քաղաքացիական և պետական պարտականութիւնները, բնական է, որ բոլորն էլ ունենան նաև իրաւունք: Ինչպէս որ մարդու օրգանիզմը առողջ և կատարեալ կը լինի միայն այն ժամանակ, երբ նրա ամեն մի անդամը կատարէ իր ֆունկցիան, նմանապէս և մի պետութիւն բարօրութիւն կունենայ, անսայթաք կառաջադիմէ այն ժամանակ, երբ նրա բոլոր քաղաքացիները պարտականութիւնների հետ միասին ունենան նաև իրաւունք: Մի երկրում չի կարող գոյութիւն ունենալ իսկական ժողովրդագրատեթիւն, եթէ այնտեղ չլինի ընդհանուր ընտրական իրաւունք:

IV. ՀԱՒԱՍՍՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաւական չէ, որ ընտրական իրաւունքը լինի ընդհանուր, նա պիտի լինի նաև հաւասար: Բաւական չէ, որ պարլամենտական և այլ ընտրութիւններին մի

երկրում մասնակցեն ամբողջ չափահաս ազգաբնակչութիւնը, հասարակութեան բոլոր խաւերը — առանց դասակարգի, ազգի կրօնի և սեռի խտրութեան: Անհրաժեշտ է նաև, որ ամենքն էլ ունենան հաւասար ձայն, մէկին չտրւի աւելի ձայնի իրաւունք, միւսին՝ պակաս: Մի խօսքով՝ պէտք է ընտրութիւններին իրականացնել, ինչպէս անգլիացի դեմոկրատներն են առաջին անգամ պահանջել, one man — one vote-ի, այսինքն՝ «մէկ մարդ — մէկ ձայնի» սկզբունքը: Իւրաքանչիւր ընտրող պիտի ունենայ միայն մէկ ձայն, և ոչ աւել:

Ժամանակակից դեմոկրատիան հիմնւած է քաղաքացիների կատարեալ հաւասարութեան սկզբունքի վրայ, նա ժխտում է ամեն մի ֆէոդալական և այլ տեսակի արտօնութիւններ, որոնք ժառանգութիւն են միջնադարեան ժամանակի: Անհրաժեշտ է այդ հաւասարութիւնը, որպէսզի իսկապէս գործնական լինեն ընդհանուր ընտրութիւնները:

Այս են պահանջում բոլոր երկրների դեմոկրատիական կուսակցութիւնները:

Շատ պարզ է և հասկանալի, որ այսպէս էլ պէտք լինէր: Բայց այդպէս չէ իրականութիւնը: Այս կամ այն երկրում խախտում է հաւասար ընտրութեան սկզբունքը՝ զանազան անհիմն պատճառաբանութիւններով: Այստեղ, ստեղծվում է մի բան պարզ է, հաւասար ընտրութեան սկզբունքի խախտումը նպատակ ունի միմիայն պաշտպանել ունեւոր, արտօնեալ դասակարգերի շահերը և ոտնահար անել աշխատաւոր դասակարգերի իրաւունքը: Ահա թէ ինչպէս:

Անգլիայում, ինչպէս տեսանք, ընտրական իրաւունքը հիմնւած է ցենզի վրայ. սեփական բնակարան, մի որոշ կարողութիւն կամ կալաժք ունեցողին միայն տրւում էր ընտրական իրաւունք: Ըստ

այդմ էլ Անգլիայում եթէ մէկը հարուստ է, զանազան ընտրական շրջաններում կալածքներ կամ առևտրական ձեռնարկութիւններ ունի, այդ կապիտալիստին իրաւունք է տրւում մասնակցելու ընտրութիւններին միաժամանակ այն բոլոր ընտրական շրջաններում, ուր նա կալածքներ ունի. մասնաւանդ որ ընտրութիւնները Անգլիայում մէկ օրում չեն կատարւում. Այսպիսով էլ պատահում է, որ բուրժուական կապիտալիստի մէկը, շնորհիւ միայն իր հարստութեան, ձեռք է բերում մէկից աւելի ձայնի իրաւունք, երբեմն 10, 20, նոյնիսկ 30, և աւելի: Հաշւել են, որ Անգլիայում 7 միլ. ընտրողներից $\frac{1}{2}$ միլիոնը ունեն 2, 3, և աւելի ձայներ:

Պարզ է ուրեմն, որ մենք այստեղ գործ ունենք ցենզային սիստեմի մի ուրիշ տեսակի, կամ աւելի ճիշտն ասած, թագնւած ցենզի հետ: Այն ընտրական սիստեմը, որով մէկին կամ միւսին արտօնութիւն է տրւում միեւնոյն պարլամենտի ընտրութիւններին մէկից աւելի ձայն ունենալու, կոչւում է պլուրալիստեմ (յոգնակի ձայնատութիւն), ուրիշ խօսքով՝ տարբեր ընտրողներ տարբեր թւով ձայն ունեն. և այն մարդիկ, որոնք կողմնակից են պլուրալիստեմին, կոչւում են պլուրալիստներ:

Պլուրալիստեմի կողմնակից են եղել շատ լիբերալներ, որոնց մէջ յիշելի է Ջ. Ստ. Միլլին: Սա և ուրիշները սլաշտպանում են այն հայեացքը, թէ չէ կարելի կրթւած և անկիրթ մարդուն նոյն թւով ձայնի իրաւունք տալ: Ինչպէս տեսնում ենք այստեղ էլ հանդէս է գալիս թագնւած կրթական ցենզը, որը իր կարգին սերտ առնչութիւն ունի կարողութեան ցենզի հետ:

Միլլն ասում է. «Միայն ֆլաս և ոչ թէ օգուտ

կարելի է սղախել այն բանից, երբ մի երկրի հիմնական օրէնքները յայտարարեն, թէ քաղաքական իշխանութեան վրայ ազիտութիւնն ունի նոյն իրաւունքը, ինչ՝ գիտութիւնը»:

Իսկ Գուստաւ Ֆրքեր, ռեպլիկով տաղանդաւոր հիմնադիրը Ֆրանսիայում, Ժորժ Զանգին ուղղած մի նախադէպ մէջ ասում է, թէ նա իր ձայնը հաւասար է համարում 20 սովորական ընտրողների ձայներին:

Միլլի և ուրիշ բուրժուական իդէոլոգների, յատկապէս ինդիւիդուալիստների փաստարանութիւնն այն է, թէ կրթւած մարդկանց պէտք է տալ մէկից աւելի ձայնի իրաւունք, սրպէսզի այդպիսով երկրի քաղաքական զարգացումը կարևոր բարձրութեան վրայ կանգնած քնայ:

Պարզ է, որ այդպիսով կրկին պաշտպանւած են լինում բուրժուազիայի շահերը. չէ՞ որ բանւորը և գիւղացին չունեն այն նիւթական միջոցները, որոնցով նրանց կարողանային պահանջած կրթական ցենզը ձեռք բերել: Բացի դրանից՝ պլուրալիստները այն կարծիքն են յայտնում, թէ հաւասար ընտրութիւն եթէ լինի՝ այդ դէպքում աշխատաւոր դասակարգը, թւական բազմութեան շնորհիւ, դիւրութեամբ իր ձեռքը կզցի քաղաքական իշխանութեան ղեկը և այդպիսով կհաստատէ իր դասակարգային իշխանութիւնը:

Դրան պիտի առարկել նախ այն, որ հաւասար ընտրութեան կողմնակիցները այդ պահանջում են սկզբունքով, ոչ թէ այս կամ այն դասակարգի, այլ բնահանրութեան շահերն ի նկատի ունենալով. չէ՞ որ ամեն մի քաղաքացի, ուզէտ թէ գիտուն, բոլորն էլ իրենց տեղն ունեն քաղաքական կազմի մէջ և իւրաքանչիւրը կատարում է մի անհրաժեշտ ֆունկցիա:

Տասնեակ դարեր առաջ դեռ Արիստոսելլոյ յայտնել է այն ճշգրիտ հայեացքը, թէ պետութիւնը առետրական ընկերութիւնը իսկ չէ, ուր շատ փոքր տեղերը շատ էլ իրաւունք ունենան, պետական գործունէութիւնը չի կարելի փողի վերածել, և ոչ էլ ամեն մի քաղաքացու ծառայութիւնը պետութեան՝ թւերով արտայայտել:

Եւ, որ պիտաւորն է, միթէ կարծում են բուրժուա իդէոլոգները, թէ պլուրալիստիզմով կառնելի դասակարգային իշխանութեան առաջը: Միթէ այն չի իրողութիւնը, որ պլուրալիստիզմ մտցնելով—որ նոյնն է թէ հարուստներին գերիշխող դարձնել—երօք մտցնում է մի դասակարգի,—նշ աշխատաւորութեան բուրժուազիայի դասակարգային գերիշխանութիւնը, մի խօսքով, պլուրալիստիզմ: Պարզ է, որ այն:

Սակայն պարզ է մեզ համար նաեւ այն, որ հաւասար ընտրութիւն մտցնելով կը հիմնւի ոչ թէ այս կամ այն դասակարգի քաղաքական գերիշխանութիւնը, այլ ամբողջ ժողովրդի վեհապետութիւնը:

Այս են պահանջում բոլոր զուտ ժողովրդական կուսակցութիւնները:

Ընտրութեան պլուրալիստիզմ գոյութիւն ունի և Բելգիայում, ուր թէև ընդունւած է ընդհանուր ընտրական իրաւունքը: Ամեն մի 25 տարեկան քաղաքացի տղամարդ, որ ապրել է մէկ տարի շարունակ մի երկրում ունի մէկ ձայնի իրաւունք:

Սակայն բացի մէկ ձայնից աւելորդ մէկ ձայն էլ ունեն հետեւեալ կատեգորիաների ընտրողները. 1) 35 տարեկան հասած ամուսնացած կամ այրի տղամարդիկ, որոնք ունեն օրինական դաւակներ և տալիս են առնըւազն 5 ֆրանկ հարկ. 2) 25 տարեկան տղամարդիկ, որոնք ունեն առնուազն 2,000 ֆրանկ արժէք ունեցող կալւածք: Վերոյիշեալ երկու պահանջներին զոհացում տեղ-

ներն ուրեմն կուսենան երկու ձայն: Աւելորդ երկու ձայնի իրաւունք ունին 1) բարձրագոյն կամ բարձր կարգի միջնակարգ ուսումնարան աւարտածները և 2) որոնք վարում են յիշեալ ուսմանը համապատասխան պաշտօն: Սակայն յամենայն դէպս ոչ ոք չէ կարող երեք ձայնից աւելի իրաւունք ունենալ: Բոլորն էլ իրենց ձայնը տալիս են միևնոյն ընտր. շրջանում:

Այդ սխառմի դէմ են կուում սոցիալիստները: Դժգոհութիւնը այդ սխառմի դէմ քանի զնում մեծանում է 1902-ին առաջարկ եղաւ վերացնել այն, սակայն ձայների սակաւ առաւելութեամբ մերժեց հաւասար ընտրողական իրաւունքները *):

Գերմանիայի Դաշնակցական Խորհուրդում էլ (Bundesrath) 17 պետութիւններ ունեն մէկ—մէկ ձայն. մէկը միայն՝ (պրուսիան) 17 ձայն իսկ մնացածը 2—6 ձայն:

Յայտնի է, որ 1906-ին յատկապէս ոռոսական յեղափոխութեան ազդեցութեան տակ, Աւստրիայում ահագին շարժում առաջ եկաւ յօգուտ ընդհանուր ընտրական իրաւունքի, որի պիտաւոր պահանջ զնոցը այնտեղի բանւորական դասակարգն էր և կառավարութիւնը համակերպեց: Իսկ ինչպիսի ընտրական իրաւունք էր այնտեղ իշխողը: Բոլոր ընտրողները բաժանում էին 5 կարգի, որոնք և կոչւում են կուրիաներ. 1) խոշոր կալւածատէրեր, 2) քաղաքային համայնքներ, 3) առետրականներ և արհեստաւորներ, 4) գիւղական համայնքներ: Այս չորս կուրիաների վրայ

*) Ամբողջ Բելգիայում ընտրողների թիւն է՝ 1,745,000: Դրանցից 1,005,000-ը ունեն 1-ական ձայն, 412,000-ը՝ 2-ական ձայն և 328,000—3-ական: Ուրեմն՝ վերջին խմբերը կարող են տալ 1,808,000 ձայն, այսինքն երկու անգամ աւելի, քան առաջինը:

1896 թվականից աւելացել էր և մի 5-րորդը, որ հիմնւած էր ընդհանուր ընտրական իրաւունքի վրայ: Առաջին չորս կուրիաները միասին ընտրում էին 353 պատգամաւոր, իսկ 5-րդը մենակ՝ 72:

Այս նշանակում է, որ 5-րդ կուրիայում 1 պատգամաւոր էր ընկնում 70,000 ընտրողի վրայ, իսկ 2-րդում՝ 1 պատգամ. միմիայն 26 ընտրողի վրայ. ուրիշ խօսքով՝ արտօնեալ 2-րդ դասի 26 ընտրողների ձայնը հաւասար է 5-րդ դասի 70,000 ընտրողների ձայնին, կամ՝ 1 ձայնը մէկ ղէպըում=2700 ձայնին՝ ուրիշ ղէպըում: Պարզ է ուրեմն այստեղ ընտրական իրաւունքի անհաւասարութիւնը, 5-րդ կուրիայի ընտրողները, որի մէջ մասնակցում են 5,000,000 ընտրողներ՝ ժողովրդական լայն խաւերից՝ ուղարկում էին պարլամենտ բոլոր պատգամաւորների միայն 17⁰/₀:

Այսպիսով ստանում ենք հետեւեալ ցանկը.

Կուրիա	Ընտրողների պատգամ.	Որքան ընտրութիւն	թիւը	Բոլոր վրայ է ընկնում 1 պատգ.
1) Խոշոր կալւածատէրեր	5,431	85	64	
2) Առևտրականներ	556	21	26	
3) Քաղաքներ	493,804	118	4,193	
4) Գիւղ. համայնքներ	1,585,466	129	12,290	
5) Ընդհանուր	5,044,222	72	69,563	

Այն բոլոր ընտրողները, որոնք, իրենց ցենզի համաձայն, իրաւունք ունէին առաջին չորս կարգերից մէկում ձայն տալու, այդ իրաւունքը ունէին նաև 5-րդ կարգում: Այդպիսով ուրեմն միաժամանակ մի ընտրող կարող էր միեւնոյն ընտրութիւններին երկու ձայնի իրաւունք ունենալ:

Այս ընտրական սխաւմը ցոյց է տալիս այն,

որ մի կողմից կառավարութիւնը ստիպւած է եղել ղեջել գեմոկրատիական պահանջների առաջ, միւս կողմից էլ չէ կամեցել քանդել դասակարգային ներկայացուցչութիւնը: «Այսպիսով,—ասում է Jellinek— (եր 11), անտրիական պատգամաւորների պալատը նմանում է երկու տարբեր կտորից կարւած զգեստի»:

Պառլամէնտի լանդտագի համար գոյութիւն ունեցող երեքդասեան ընտրական սխաւմն էլ ինչպէս տեսանք, պարունակում է իր մէջ ոչ միայն ցենզային արտօնութիւն, այլ նաև հանդիսանում է իբրև մի տեսակ պլուրալիստեմ:

Հաւասար ձայնաւորութեան սկզբունքը կը խանգարւի նաև այն ժամանակ, երբ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք տրւի իրաւաբանական մարմիններին, այսինքն այն բոլոր հաստատութիւններին, ընկերութիւններին և միութիւններին, որոնք ունեն հաստատւած կանոնադրութիւն և սեփականութիւն: Դրա հետևանքը այն կը լինի, որ հարուստ մարդիկ, որոնք այս կամ այն տեղ շատ ակցիաներ ունեն, կամ արդիւնաբերողներ են և այլն, դրանք բոլորը չեն ունենայ միայն մէկ-մէկ ձայն, ինչպէս աշխատաւորները, այլ երկու, երեք և աւելի ձայն: Դրանով էլ, ուրեմն, խախտւած կը լինի հաւասար ընտրութեան սկզբունքը:

Եթէ մի երկրում գոյութիւն ունենայ նոյնիսկ ընդհանուր և հաւասար—թէկուղ հէնց ուղղակի և դադանի ձայնաւորութեամբ—ընտրական իրաւունք, այդ ղէպըում ևս կարող է խախտուել հաւասար ընտրութեան սկզբունքը ուրիշ եղանակով: Ահա թէ ինչպէս:

Մեր խօսքը այսպէս կոչւած, ինչպէս Բիսմարկն է անւանել, բնօրական աւխառնագրութեան մասին է. այսինքն, երբ ամբողջ երկիրը բաժանուած է որոշ թիւ ընտրական շրջանների, սակայն մի շրջան կարող է

ունենալ աւելի թւով ազգաբնակութիւն (ստենք օր-
150,000), իսկ մի ուրիշը՝ պակաս (օր. 85,000): Այ-
նեքն է, որ այս դէպքում էլ խախտուած է հաւասար
ընտրողական իրաւունքի սկզբունքը:

Ուրեմն, անհաւասար ընտրութեան առաջն առ-
նելու համար անհրաժեշտ է, որ երկիրը բաժանուի հա-
ւասար թւով բնակիչներ ունեցող ընտրական շրջան-
ների: Այս բաւական չէ. հարկաւոր է մի քանի տարին
մի անգամ, ամենալաւը՝ ժողովրդագրութիւնից ան-
անմիջապէս յետոյ՝ (ինչպէս որ է Ֆրանսիայում) —
նորից բաժանել երկիրը ընտրական շրջանների, էլի
ազգաբնակութեան թւի համաձայն. չէ՞ որ մի շրջանի
բնակիչների թիւը որոշ ժամանակում կարող է բազ-
մանալ, իսկ մի ուրիշինը՝ նւազել: Միանգամ բնդմիջտ,
գեմոկրատիական տեսակէտով, պարզ և ընդունելի
պիտի լինի այն սկզբունքը, որ հաւասար թւով ընտ-
րողներ միայն կարող են մի պատգամաւոր ուղարկել
պարլամենտ:

Գերմանիայում, օրինակ, երկիրն ընտրական շր-
ջանների է բաժանւել սրանից դեռ 46 տարի առաջ.
այդ բաժանումը մնացել է հաստատ մինչև օրս: Սրա
հետևանքն այն է, որ 46 տարի առաջ շատ ընտրական
շրջաններում, ուր կար 100,000 բնակիչ — այժմ կայ
հազիւ 40—50,000, և կան այնպիսի շրջաններ, ուր
այդքան տարիների ընթացքում ազգաբնակութեան
թիւը հասել է 150—300,000-ի: Պատճառն էլ պարզ է.
գիւղը քանի գնում դատարկւում է, իսկ քաղաքը՝ մե-
ծանում: Առաջ են եկել խոշոր արդիւնագործական
կենտրոններ, որոնց ազգաբնակութեան ամենախոշոր
մասը բանւորներ են: Դուրս է գալիս ուրեմն, որ ար-
դիւնագործական կենտրոնների 300,000 ընտրողներն
էլ պիտի պարլամենտ ուղարկեն մէկ պատգամաւոր,

գիւղական 50,000-ն էլ մէկ պատգամաւոր: Այս բա-
ւական չէ. «ընտրական աշխարհագրութեան» միջոցով
կառավարութիւնը մեծ քաղաքների արւարձանները,
ուր ապրում են գեմոկրատիական տարրեր փոխանակ
միացնելու քաղաքի ընտրական շրջանին, միացնում է
շրջակայ գիւղական ազգաբնակութեան շրջանին, և,
այդպիսով, այդ շրջանում փոքրամասնութիւն կազմող
գեմոկրատ բանւորների ձայնը խեղդւում է աւելի բազ-
մաթիւ, բայց պահպանողական գիւղական ընտրողնե-
րի մէջ:

Դեռ այն էլ կայ, որ Գերմանիայի (այժմ էլ զո-
յութիւն պահպանող) ընտրողական շրջանները կազ-
մւել են 1871-ին, երբ Գերմանիան ունէր 39,700,000
բնակիչ և ըստ այդմ ուղարկւում է 397 ներկայացու-
ցիչ, մինչ այժմ Գերմանիայի բնակիչների թիւը հա-
սել է մօտ 70,000,000-ի, իսկ ներկայացուցիչների
թիւը մնացել է էլի նոյնը:

Դրանից կրկին տուժում է աշխատաւորութիւնը:

Պարզ է, որ այս դէպքում զգալի կերպով խախտ-
ւում է հաւասար ընտրութեան սկզբունքը: Գերմա-
նիայի աշխատաւորութիւնը կոխ է մղւում այդ ան-
արդարութեան դէմ՝ քանի որ տուժում է այստեղ
բանւորութիւնը, մինչ՝ գիւղական աւելի անգիտակից
և խաւար մասսաների վրայ յենւող կուսակցութիւննե-
րին ձեռնառու է հին բաժանումը: Այդպիսի բաժանման
շնորհիւ է միայն, որ ռայխստագի ընտրութիւններից
մէկի ժամանակ աւելի քան 3 միլիոն սոցիալիստ ընտ-
րողներ ռայխստագ ուղարկեցին 81 ներկայացուցիչ,
այն ինչ 2 միլիոնից էլ պակաս ձայն ունեցող կենտ-
րոնի կուսակցութիւնը ուղարկեց 100 պատգամաւոր:
Անհաւասարութիւնն ակներև է:

V. ՌԻՂԱԿԻ ԵՒ ԳԱՂՏԵՒ ԶԱՅՆՏԻՌԻԹԻՆ

Ռամկավար ընտրութիւնները բացի ընդհանուր և հաւասար լինելուց, պիտի լինեն անպատճառ նաև ուղղակի ու գաղտնի:

Մենք երբեք աչքաթող չպիտի քննենք մի հանգամանք—խակական ժողովրդապետութեան սկզբունքը: Եթէ անհնար է իրագործել անմիջական ժողովրդապետութիւնը, ապա ուրեմն ներկայացուցչական սխառմը այնպիսի պայմանների մէջ պիտի գնել, որ ներկայացուցիչները յիշաւի հանդիսանան ժողովրդական կամքի արտայայտիչներ:

Այս տեսակէտից նայելով ընտրութիւնների վրայ, մենք անպատճառ պիտի պահանջենք, որ նրանք լինեն ուղղակի: Այս ասելով մենք հասկանում ենք ձայնաւութեան այն եղանակ, երբ ընտրողները իրենց քէն անմիջապէս՝ ուղղակի տալիս են նրան, ում ցանկանում են ընտրած տեսնել: Ժողովուրդը ինքը անմիջապէս ընտրում է իր ներկայացուցիչներին:

Սակայն այդպէս չէ լինում միշտ: Յաճախ ընտրութիւնները լինում են անուղղակի ձայնաւութեամբ. այսինքն ընտրող ազգաբնակիչները իր միջից ընտրում է որոշ թւով պատկերակներ (выборщики) որոնք արդէն, իրենց կողմից, ընտրում են ներկայացուցիչ. այս դէպքում ուրեմն ընտրութիւնները կատարւում են երկասիւնան կարգով:

Բայց պատահում է, որ ընտրութիւնները լինում են ոչ թէ երկաստիճան, այլ եռաստիճան, նոյն իսկ քառաստիճան մի խօսքով՝ բազմասիւնան կարգով, այսինքն՝ ընտրող ազգաբնակիչները ընտրում է պատկերակներ, սրանք էլ իրենց կողմից ընտրում են

լիազօրներ, և այլն, որոնք և իրենց կողմից ընտրում են ներկայացուցիչ *):

Յիշմամայն ակներև են ուղղակի ձայնաւութեան առաւելութիւնները ռամկավարութեան առաւելէտից: Երբ ժողովուրդը անմիջապէս ընտրում է իր պատգամաւորին, այդ դէպքում պահպանւում է սերտ կապ այդ երկուսի մէջ: Ժողովուրդը գիտէ, թէ ով է իր ներկայացուցիչը՝ վերջինս էլ գիտէ, թէ ովքեր են իր ընտրողները: Ընտրողները հնարաւորութիւն ունեն միշտ հետեւելու իրենց ընտրեալի գործունէութեան, քննադատաբար վերաբերելու նրան. սրանք կը տեսնեն, թէ իրենց ներկայացուցիչը յիշաւի՞ արտայայտիչ է իրենց՝ ընտրողների քաղաքական-սոցիալական հայեացքների, լրագիրը ամենալաւ սուրհանդակն է այդ բանի համար:

Պարլամենտական նստաշրջանը վերջացնելուց յետոյ պատգամաւորը գնում է իր ընտրական շրջանը, խօսում, խորհրդակցում է իր ընտրողների հետ, ստանում է նրանցից որոշ մանդատներ, այդպիսով ստեղծւում և պահպանւում է սերտ կապ ընտրողների և ընտրելուի մէջ. վերջինս հանդիսանում է առաջինների կամքի արտայայտիչ:

Ուղղակի ընտրութիւնները կենդանի հետաքրքրութիւն են զարթեցնում հասարակութեան մէջ: Ստատիստիկան ցոյց է տալիս, որ ուղղակի ընտրութիւններին երկու անգամ աւելի մարդիկ են մասնակցում, քան անուղղակի ընտրութիւններին:

Եթէ ներկայացուցիչը չարգարացնէ ընտրողների յոյսը, ապա ուրեմն վերջինները հնարաւորութիւն ու-

*) Պետական Դումայի ընտրութիւնները լինում էին երկաստիճան, տեղ-տեղ միջև իսկ եռաստիճան և քառաստիճան ձևով:

սեն հետեւեալ ընտրութիւնների ժամանակ չգնել նրա թեկնածութիւնը:

Միւս կողմից ակներև են անուղղակի ընտրութիւնների թերութիւնները, նրանց հակաժողովրդական բնոյթը:

Երկատիճան կամ ընդհանրապէս անուղղակի ընտրութիւնների ժամանակ լիազօրները կոմպրոմիսս անելով յանկարծ ներկայացուցիչ կարող են ընտրել բոլորովին ուրիշ հայեացքների տէր մարդու, քան ժողովուրդը. այդպիսի ճանապարհով ընտրածը արտայայտիչ կը լինէր մի խումբ մարդկանց, ոչ բոլոր ընտրողների կամքի:

Անուղղակի ընտրութիւնները ամենից շատ վնասում են աշխատաւոր դասակարգերին: Մի գիւղացու կամ բանւորի համար ծանր բան է լիազօր ընտրել, ծախսեր անել և ընտրութեան վայրը գնալ, այն ինչ այդ բանը դիւրին է բուրժուաների համար: Բացի դրանից՝ ուղղակի ընտրութիւնների ժամանակ զժառ կարող են պատահել խարդախութիւններ և ճնշում, քան ուղղակի ընտրութիւններին: Հաղարաւոր ընտրողների զժառ է կաշառել, իսկ սակաւաթիւ լիազօրներից մէկին կամ մի քանիսին՝ ոչ զժառ:

Կառավարութիւնը հեշտութեամբ կարող է ճնշում գործ դնել սակաւաթիւ լիազօրների վրայ և իր ուղած մարդկանց ընտրել տալ, իսկ ուղղակի ընտրութիւնների ժամանակ համեմատաբար շատ քիչ երկկուղ կարող է լինել այդ նկատմամբ:

Ուղղակի ձայնաւորութիւնը բնորոշւած է Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում (ռայխստագի ընտրութիւններին) և ուրիշ ուսմկավար երկիրներում,

ինչպէս այժմ նաև՝ Ռուսաստանում*):

Ինչպէս որ մենք պահանջում ենք ուղղակի ձայնաւորութիւն, այնպէս էլ անհրաժեշտ ենք համարում գաղտնի ձայնաւորութիւնը: Ըստ երևոյթին ոչ մի վնաս էլ չի լինի, նոյնիսկ շատ լաւ կը լինէր, եթէ ընտրողները բացարձակ կերպով յայտնէին, թէ ում են նրանք ձայն տալիս, թէ ով է նրանց ընտրելին: Բայց քւէարկութեան կողմնակիցները ասում են, թէ ով որ քաղաքացիական արիութիւն ունի, ով արժանապէս գնահատելի գիտէ իր իրաւունքները, նա պարտաւոր է առանց քաշուիւ կամ վախենալու տալ իր քւէն ցանկացած մարդուն:

Սակայն այդ բոլոր խօսքերը իրականութեան հետ ասընչութիւն չունեն: Մենք գործ պիտի ունենանք ոչ թէ վերացական գաղափարների հետ, այլ գործնական կեանքի: Իսկ ինչ է սովորեցնում մեզ գործնական կեանքը: Ահա թէ ինչ:

Ասենք թէ մի ընտրական շրջանում պէտք է ընտրել մի պատգամաւոր: Հաւաքւում են բոլոր ընտրողները, նրանց մէջ կան թէ՛ բազմաթիւ բանւորներ և թէ՛ նրանց կառավարիչները և տէրերը, թէ՛ ստորագրեալներ և թէ՛ ստորագրողներ, հսկում են նաև կառավարութեան մարդիկ: Ի՞նչ գուրս կգայ բաց քւէարկութեան դէպքում: Այն, որ հաղարաւոր բանւորներ, հացի խնդրից զրդւած, ստիպւած կը լինեն ձայն տալու այնպիսի մարդու, որը ոչ թէ բանւորների, այլ գործատիրոջ շահերը պիտի պաշտպանէ պարլամենտում. հէնց ինքը տէրը կը դնի իր թեկնածութիւնը. վայ եկել տարել է այն բանւորներին, որը կը

*) Անուղղակի ընտրութիւնները—պահւում են մինչև օրս Գրուսսիայում և Ռումինիայում: Միաց.-Նահանգների նախագահի ընտրութիւնն էլ լինում է երկատիճան եղանակով:

համարձակել «տիրոջ»-ը ձայն չտալ, նրա կամքին հակառակ երթալ, հեշտութեամբ նա կարող է հորցնել իր հացի կտորը: Նոյնը նաև միւս ստորադրեալներէ վերաբերմամբ կարելի է ասել. Իսկ որ գլխաւորն է, բաց քւէարկութեան ժամանակ արթուն կերպով հրակում են կառավարութեան գործակալները: Միթէ քչերը կը լինեն, որ կառավարութիւնից վախենալով ձայն կը տան նրա ուզած մարդուն:

Ո՞ւմ յայտնի չէ այն, որ երբ գիւղի ամուսնէր են ընտրում, հարստահարւած գիւղացին ձայն է տալիս էլի իրեն կեղեքող վաշխառուն, բռնակալ իշխանաւորներին: Ինչո՞ւ. ոչ միայն նրա համար, որ ազէտ է, այլ նաև նրան համար, որ գիւղացին վախենում է նրանց վրիժառութիւնից:

Ուրեմն՝ այնպիսի մի կարեւոր գործ, ինչպիսին հանդիսանում են ընտրութիւնները, չպիտի գո՞ն բերել ինչ որ «քաղաքացիական արիութեան», որից ոչ մի գրական շահ չունի աշխատաւոր ժողովուրդը: Միթէ կեղծաւորութիւն չեն անում բաց քւէարկութեան պաշտպանները: Միթէ նրանք ամեն ժամանակ և ամեն տեղ քաղաքացիական արիութիւն են ցոյց տալիս, ճշմարտութիւն խօսում՝ առանց ծածկելու: Ոչ, ուրիշ պատճառ ունեն նրանք. իրենց դասակարգային-բուրժուական շահերը պաշտպանելու միջոցներից մէկն է բաց քւէարկութիւնը: Ահա թէ որտեղ է գաղտնիքը:

Այդ բաներից ազատելու համար՝ աշխատաւոր ժողովրդի շահը պահանջում է, որ քւէարկութիւնը լինի գաղտնի: Իւրաքանչիւր ընտրող իր խղճի ձայնին լսելով կընտրէ նրան, ում կը համարի ամենից արժանաւոր, Այս է պատճառը, որ գաղտնի քւէարկութիւն է ընդունւած եւրոպական համարեա բոլոր ուղատ

երկիրներում: Բաց քւէարկութիւնը հուսթեան մնացորդ է և վերացնելու արժանի:

Չանաղան կերպ կարելի է կատարել գաղտնի քւէարկութիւնը: Անգլիայում այսպէս են անում, ընտրական թերթերի վրայ նշանակւած են լինում բոլոր կանգիտատների անունները: Իւրաքանչիւր ոք իր ցանկացած մարդու անւան կողքին խաչ է դնում և յանձնում ընտրական յանձնաժողովին: Ուրիշ երկիրներում՝ ընտրական թերթերի վրայ ոչ մի անուն էլ չի լինում գրած, թողնւում է ընտրողներին գրել ուզած անունը և թերթը յանձնաժողովին տալ: Գերմանիայում ամեն մի կուսակցութիւն տալում է իր առանձին ընտրաթերթերը և ձայն տալիս ցանկացած մարդուն, այդ ընտրաթերթերն էլ հաւաքում է յանձնաժողովը և ապա համարում: Նոյնը նաև մեզնում: Որպէսզի անգրագէտներին էլ յարմարութիւն տրւի, կուսակցութիւնների ընտրաթերթերը առանձին-առանձին գոյներ ունեն. օրինակ՝ լիբերալներինը դեղին է, սոցիալիստներինը՝ կարմիր և այլն: Անգրագէտ մարդն էլ արդէն հեշտութեամբ կարող է ջոկել իր ընտրեալների ցանկը:

Այս է ամենայարմար ձեւը գաղտնի ընտրութեան ժամանակ: Մի քանի տեղերում ընդունւած է նաև այն սխառութիւնը, որ իւրաքանչիւր թեկնածու ունենում է իր տուփը, ընտրողները մօտենում են տուփերին և ցանկանա՞ծ թեկնածուի տուփը գցում են սպիտակ քւէ, իսկ չցանկացածին սև քւէ:

Գաղտնի քւէարկութիւնը աւելի կատարեալ անելու համար ընտրւած կարգ է նաև հետեւեալը: Ընտրութեան վայրում լինում է մի յատուկ սենեակ, ուր մտնում է իւրաքանչիւր մի ընտրող և այնտեղ, ուր ոչ ոք նրան զիտել չէ կարող, յատուկ պատրաստ-

ւած ծրարի մէջ է դնում իր ուղած ընտրութիւնը: Այնտեղից դուրս գալով ծրարը տալիս է յանձնաժողովին: Ոչ ոք այդպիսով չէ կարող իմանալ, թէ այս կամ այն ընտրողը ում է ձայն տուել:

Վ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ (ՊՐՈՊՈՐՑԻՈՆԱԼ) ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եթէ մի տեղ ընտրութիւնները կատարուած են քառանկամ՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ֆորմուլայով, եթէ անգամ ընտրական շրջանները հաւասար թւով ազգաբնակչութիւն ունեն, այդ դէպքում ևս կխախտուի դեմոկրատիական ընտրութիւնների սկզբունքը, եթէ այնտեղ մաթորիտար (ըստ մեծամասնութեան) ձայնաւորութիւն գոյութիւն ունի, այսինքն՝ երբ բոլոր ընտրական շրջաններում էլ ընտրողների սոսկ մեծամասնութեան թեկնածուներն են համարուած ընտրուած:

Մաթորիտար ընտրութիւններն էլ կարող են կատարուել երկու կերպ: Եթէ օրինակ պարլամենտ պիտի ուղարկել 100 պատգամաւոր, երկիրը կարելի է բաժանել ա) 100 հաւասար ազգաբնակչութիւն ունեցող, ընտրական շրջանների, որոնցից իւրաքանչիւրը կուղարկի մէկ պատգամաւոր, և բ) աւելի սակաւաթիւ, բայց անհաւասար ընտրական շրջանների (օրինակ՝ 2—5), որոնցից մէկը կուղարկի 10, միւսը 15, երրորդը աւելի թւով պատգամաւորներ, նայած ազգաբնակչութեան համեմատական բաղմութեան: Առաջին դէպքում ընտրողը ամբողջ շրջանի համար ձայն պիտի տայ միայն մէկ թեկնածուի. այդ պատճառով էլ այդ ձայնաւորութիւնը կոչուած է միանւանական կամ շրջա-

նային (Einwahl, scrutin uninominal կամ scrutin d'arrondissement, одноименные выборы): Երկրորդ դէպքում մի ընտրական շրջանի ամեն մի ընտրող ձայն պիտի տայ մի շարք թեկնածուների, որքան պատգամաւոր որ պարլամենտ պիտի ուղարկուի, այդ պատճառով էլ այդ ընտրութիւնները կոչուած են ընտրութիւններ ըստ ցուցակների (Listenvahl, scrutin de liste, выборы по списку): Առաջին տեսակի ընտրութեան բաժանումը գոյութիւն ունի համարեա բոլոր մեծ պետութիւններում, ուր չէ մոռւած համեմատական (պրոպորցիոնալ) ընտրութիւնը, երկրորդ տեսակի բաժանումն արդէն մտցրած է մի քանի մանր պետութիւններում՝ Բելգիա, Սերբիա, Դանիա և Շվեյցարիայի մի քանի կանտոններում: Երկու դէպքում էլ ընտրուած է համարուած այն թեկնածուն, որ ստացել է առաջին ընտրութեան ժամանակ ընտրութեան մասնակցողների կէսից աւելիի ձայնը, կրկնաբեւարկութեան ժամանակ՝ ձայների համեմատական առաւելութիւն: Ուրեմն՝ «ձայն բաղմացի» սկզբունքը գործադրուած է այդ ընտրութիւններին, որոնք և կոչուած են մաթորիտար: Պարզ է ուրեմն և այն, որ փոքրամասնութեան ձայնը միանգամայն կորչում է այդ օրինակ ընտրութիւնների ժամանակ:

Օրինակներով խօսենք: Ասենք թէ մի ընտրական շրջանում, ուր պիտի ընտրուի մէկ պատգամաւոր, ձայն պիտի տան 1000 ընտրողներ: Ասենք թէ նաև դրանք բոլորը պատկանում են երկու կուսակցութեան՝ 600 հոգի կադէտ են, 400 հոգի՝ աշխատաւորական: Իւրաքանչիւր կուսակցութիւն կը դնի իր թեկնածուն: Պարզ է, որ յիշեալ դէպքում կընտրուի կադէտ թեկնածուն, քանի որ նա կստանայ ձայների բաղմութիւն (600 ձայն), իսկ աշխատաւորականների թեկնածուն

կսեանայ, նրա ստացած 400 ձայնը գրողի նշանակութիւն չի ունենայ:

Մենք ցոյց տւինք մաթորիտար ընտրութիւնների անյարմարութիւնը. և այդ՝ ուր երկու կուսակցութիւն գոյութիւն ունի. իսկ եթէ նոյն ընտրական շրջանում 3—4 կուսակցութիւններ կան՝ աւելի տգեղ հեռանք կարող է ստացուել: Մի կուսակցութիւն կարող է ունենալ 350 ձայն, երկրորդը 300, երրորդը 200, չորրորդը 150: Ամեն մէկը կը դնի իր թիկնածուն: Այդպիսով ուրեմն՝ այդ շրջանում ընտրած պատգամաւորը կը հանդիսանայ փոքրամասնութեան (1000 ձայնից—3503) ներկայացուցիչ, և մեծամասնութեան ձայնը այս դէպքում կ'մնայ անասց որ և է նշանակութեան: Նմանապէս, երբ ընտրութիւնը լինում է ոչ թէ միանշանակա՞ն, այլ ըստ ցուցակների. այդ դէպքում էլ նոյն հեռանքը կարող է ստացուել: Ասենք, թէ մի շրջանում հարկաւոր է ընտրել 10 հոգու: ընտրում են 2000 հոգի, որոնցից 1001-ը մի կուսակցութեան է պատկանում, 999-ը ուրիշ. 1001 հոգին էլ բոլորը ձայն կը տան բոլոր իրենց 10 թեկնածուներին, իսկ 999-ի 10 թեկնածուները կը սեանան:

Ուրիշ օրինակ,

Ասենք թէ մի երկրի բոլոր ընտրողների ընդհանուր թիւն է 50,000, որոնք 50 ընտրական շրջանում պիտի ընտրեն 50 երկայացուցիչ: Ասենք նաեւ, թէ այդ երկրում կայ երկու կուսակցութիւն՝ և B: Ընդունենք թէ A կուսակցութիւնը 20 ընտրական շրջաններում ունի 900-ական ձայն, իսկ B-ն 100-ական ձայն, մնացած 30 ընտրական շրջաններում, ընդհանրապէս, A-ն ունի 400-ական ձայն, իսկ B-ն 600-ական: Այսպէս ուրեմն՝ մաթորիտար ընտրութեան

դէպքում A կուսակցութիւնը պարլամենտում կունենայ 20 ներկայացուցիչ միայն, իսկ B-ն՝ 30 ներկայացուցիչ: Ուրեմն՝ A կուսակցութիւնը տրեւի է $20 \times 900 = 18,000$ և $30 \times 400 = 12,000$ և ընդամենն 30,000 ձայն. իսկ B կուսակցութեանը տրեւի է $20 \times 100 = 2000$ և $30 \times 600 = 18,000$ և ընդամենը 20,000 ձայն: Այսպիսով կստացւի մի տրամաբանական անհեթեթութիւն: Փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւնը (B, 20,000 ձայնով), պարլամենտում կ'ունենայ աւելի թւով ներկայացուցիչներ (30), քան մեծամասնութեան կուսակցութիւնը (A, 30,000 ձայնով). որ կ'ունենայ միմիայն 20 ներկայացուցիչ:

Առաջ ենք բերում հետեւալ ցուցակը *), որ ցոյց է տալիս 1890-ի ընտրութիւնների հետեանքը Բաղէնում:

Կուսակցութիւններ	Ձայների թիւը	Ներկայացուցիչների թիւը
Նացիոնալ-լիբերալ	82,269	
Կենտրոնի կուսակ.	80,726	8
Ազատամիտներ և դեմոկրատ.	40,223	2
Սոցիալ-դեմոկրատներ	29,309	1
Պահպանողական	17,826	2
«Վայրենիներ» (անկուսակ.)	8,444	1
Ընդամենը	258,804	14

Այս ցուցակից պարզ երևում է, որ երկրի ամենազօրեղ կուսակցութիւնը՝ Նացիոնալ-լիբերալները, որոնք ստացել են բոլոր ձայների $\frac{1}{3}$ -ը. չեն կարողացել ընտրել և ոչ մի ներկայացուցիչ, մինչ այդ կուսակցութիւնից աւելի պակաս ձայն ստացող կենտրոնը ընտրել է 8 ներկայացուցիչ: Մինչ նոյն Նացիո-

*) Георгъ Мейеръ, изд. право. 175.

նալ-լիբերալները կուսակցութիւնը 1897 թ. ընտրութիւնների ժամանակ ստանալով բոլոր ընտրողների կէսից պակաս ձայն (275,247-ին 121,831 ձ.) ընտրել էր ընդամենը 14 ներկայացուցիչներից 9 հոգի իր կուսակցութեան մարդիկ:

Թէ յիշատի մաժորիտար ընտրութիւնները չեն կարող իսկական ժողովրդական «ներկայացուցչութեան» պատկերը տալ, այդ երևում է նաև հետեւալ փաստալից տեղեկութիւններից^{*)}: Ֆրանսիայում 1881 թւականից մինչև 1902-ը տեղի ունեցած ընտրութիւնները տեւել են հետեւալ պատկերը:

Թւական	Ներկայացուցիչների ստացած ձայների թիւը	Ներկայացուցչի շուրջը կած ձայների թիւը
1881	4,777,000	5,600,000
1885	3,042,000	6,000,000
1889	4,526,000	5,800,000
1893	4,513,000	5,930,000
1898	4,906,000	5,633,000
1902	5,159,000	5,818,000

Այս թւերից պարզւում է, որ բոլոր ընտրութիւնների ժամանակ էլ ձայների կէսից աւելին չէ ունեցել ներկայացուցչութիւն, իսկ 1885-ի ընտրութիւնների ժամանակ՝ մինչև իսկ բոլոր ընտրողների $\frac{2}{3}$ -ը: Իրողութիւնը ուրեմն այն է, որ երկիրը կառավարում են փոքրամասնութեան ներկայացուցիչներ:

Քանի որ մաժորիտար ընտրութիւնների միջոցով չէ կարող արտայայտւել ամբողջ, կամ համարեա ամբողջ ժողովրդի կամքը, այդ պատճառով էլ գեմոկրատական ընտրութիւնների կողմնակիցները ջանքեր են թափել և սխտեմներ մշակել՝ ազգաբնակչութեան

*) Государств строй и. т. д. кр. 303.

փոքրամասնութեան շահերը ընտրութիւնների ժամանակ ֆրասած չլինելու համար:

Երկու տեսակ միջոց է առաջարկել այդ նպատակին հասնելու համար—փոքրամասնութեան ներկայացուցչութիւն և պրոպորցիոնալ ընտրութիւն: Ակնյայտ է դրա կարեւորութիւնը այնպիսի երկրներում, ուր գոյութիւն ունեն մի քանի կուսակցութիւններ և կամ ուր ապրում են մի քանի ազգութիւններ: Եթէ ընդունէինք մաժորիտար ընտրութիւնների սկզբունքը, այդ դէպքում պիտի փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւնները և մանր ազգութիւններն անտես առնւէին, ինչպէս որ յիշաւ այդպէս էլ լինում է: Կովկասի նման մի երկիր, ուր ապրում են շատ մանր ազգութիւններ, շահազրկւած է փոքրամասնութեան շահերի պաշտպանութիւնը երաշխաւորող ընտրութեան ներմուծմամբ, որը իր տեղին երբեմն աւելի կարեւոր նշանակութիւն ունի, քան ուղղակի կամ գաղանի ձայնաւութիւնը:

Համեմատական (պրոպորցիոնալ) ընտրութեան կողմնակից են Եւրոպայում նաև մեծամասնութիւն կազմող կուսակցութիւնները. նախ՝ նրա բուն դեմոկրատիական ոգին ի նկատի ունենալով, և երկրորդ այն, որ ուրիշ սահմանափակումների (պուլաւսիտեմ, անտելոգալի ձայնաւութիւն, և այլն) շնորհիւ ֆրասւում են մեծամասնութեան շահերը և պաշտպանւում փոքրամասնութիւն կազմող արտօնեալների շահերը: Այդ է պատճառը, որ վերջինները մեծ մասամբ հակառակ են պրոպորցիոնալ ընտրութիւններին:

Նախ տեսնենք, թէ ինչ պէտք է հասկանալ փոքրամասնութեան ներկայացուցչութիւն ասելով, որն էլ իր կարգին երկու եղանակով կարող է իրադրուել—անկատար վոտում (vote limité) և հաւաքական

վոտում (vote cumulatif): Անկատար վոտումի էութիւնն այն է, որ այն ընտրողական շրջաններում, որտեղ պիտի ընտրեն մի քանի ներկայացուցիչներ, ամեն մի ընտրողի իրաւունք է տրուում իր ձայնը տալու ոչ թէ բոլոր, այլ միայն մի քանի թեկնածուների (օր. 5-ից 3 հոգու): Այսպիսով էլ փոքրամասնութեանը հնարաւորութիւն է տրուում անցկացնելու իր, թէև սակաւաթիւ, թեկնածուներին:

Հաւաքական վոտումի էութիւնը հետեւեալն է: Դիցուք մի ընտրական շրջանում հարկաւոր է ընտրել 10 պատգամ: Ամեն մի ընտրող իրաւունք ունի այնքան ձայն տալու, որքան որ պատգամաւորներ պիտի ընտրեն: Երշած դէպքում ընտրողին իրաւունք է տրուում այդ 10 ձայնն էլ տալու թէկուզ միայն մէկ թեկնածուի:

Տեսնում ենք՝ յիշած ընտրական եղանակը խիստ միտումաւոր է և ձգտում է հարցը ոչ թէ սկզբունքով լուծելու, այլ արեւատական ճանապարհով զիւրութիւն տալու փոքրամասնութեանը կամ նոյն եղանակ թուլացնելու մեծամասնութիւնը:

Բոլորովին ուրիշ սկզբունքային ելակէտ ունի համեմատական (պրոպորցիոնալ) սիսեմը: Նա աշխատում է պարլամենտում համեմատական կերպով ներկայացնել տալ պատգամաւորներին ընտրող կուսակցութիւնները: Համեմատական ընտրութիւնների կողմնակիցներն այն հիմնաւոր համոզմունքն ունեն իրենց ելակէտ, թէ պարլամենտական ներկայացուցիչները պէտք է արտայայտիչ հանդիսանան նրանց ընտրողների կարծիքի: Ըստ այնմ էլ, ասում է Չ. Ստ. Միլլ. ամենալաւ պատգամաւորը նա է, որ ամենից լաւ արտայայտիչ է իր ընտրողների կամքի: Ոմանք յայտնում են նոյնիսկ այն կարծիքը, թէ ներկայա-

ցուցիչներն իրենց ընտրողների սոսկ լիազօրներն են, հետեւապէս, նրանք ըստ կարելոյն ճշգրիտ կերպով պարտաւոր են արտայայտել պարլամենտում իրենց ընտրողների կարծիքները: Միրաբոն ասել է: «Պարլամենտի ներկայացուցիչները ժողովրդի վերաբերմամբ պիտի լինեն այն, ինչ աշխարհագրական քարտէզը՝ երկրի իսկական աշխարհագրական դիրքի վերաբերմամբ»:

Գեմոկրատական պետութեան զաւապարը զուտ ժողովրդապետութեան սկզբունքը որոշ չափով իրագործելի դարձնել նաև ներկայացուցչական ժողովում, ուստի և ընտրեալ ներկայացուցիչները պէտք է արտայայտիչ լինեն ժողովրդական կամքի: Պրոպորցիոնալ ընտրութիւններն էլ հանգիստանում են իբրև մի միջոց այն բանի, որ զանազան կուսակցութիւններ, թէկուզ սակաւաթիւ հետեւողներով, հնարաւորութիւն ունենան մասնակցելու ժողովրդական ներկայացուցչութեան մէջ: Ուրեմն՝ այդպիսով պաշտպանւում են միաժամանակ և փոքրամասնութեան շահերը: Պրոպորցիոնալ ընտրութեան նշաբանն է՝ «փոքրամասնութիւնը կշռադատում է, մեծամասնութիւնը վճռում»: Բացի կուսակցութիւնների ներկայացուցչութիւն լինելուց՝ պարլամենտը հանդիսանում է նաև երկրամասերի և ազգութիւնների ներկայացուցչութիւն: Ամեն մի երկրամաս, նահանգ կամ գաւառ ունի իր առանձնայատուկ, ինքնուրոյն շահերը, որոնք պաշտպանութիւն պիտի գտնեն ժողովրդական ներկայացուցչութեան մէջ: Նմանապէս առանձին-առանձին ազգութիւններ ունեն իրենց սեփական շահերը: Պրոպորցիոնալ ընտրութիւնները, փոքրամասնութեան շահերը պաշտպանելով, այդպիսով նաև գոհացում են տալու այդ պահանջներին:

Գործնական կեանքում ինչպէս պիտի իրակա-

նացնել համեմատական ընտրութեան սկզբունքը: Ասենք թէ մի ընտրական շրջանից պարլամենտ պիտի ուղարկել 10 ներկայացուցիչ: Ընտրողների թիւն է 1000: Մաթորիտար ընտրութիւնների ժամանակ ընտրւած է համարւում նա, որ ստացել է կէսից աւելի ձայն, յիշած օրինակում՝ 501 ձայն. և եթէ մի կուսակցութիւն կէսից աւելի (թէկուզ միայն 501) ձայն ունի իր կողմը, 10 հոգին էլ իր մարդկանց կընտրէ, իսկ 499-ը ընտրելիները կսկսան:

Այլ է պրոպորցիոնալ ընտրութեան սկզբունքը, որ տարբեր կուսակցութիւններ, նաև փոքրամասնութիւնը կամենում է ներկայացնել: Վերցնենք նոյն օրինակը: 1000 ընտրող կայ և 10 ընտրելի: Եթէ 600 հոգի մի կուսակցութեան են պատկանում, 400 մի ուրիշ, այդ դէպքում առաջին կուսակցութիւնը, իր թիկնածուների ցանկից (կարգով սկսած առաջինից) միջից ընտրում է 6 հոգու, միւս կուսակցութիւնը՝ 4 ներկայացուցիչ: Այսպիսով, ուրեմն, կուսակցութիւններ ցերեկայացուցիչներ են ուղարկում իրենց համեմատական (պրոպորցիոնալ) քւի համաձայն: Այդ պատճառով էլ հէնց ընտրութեան այդ սխտեմը կոչւում է համեմատական կամ պրոպորցիոնալ:

Այսպէս էլ կարելի է անել: 1000 հոգու միջից պիտի ընտրել 10 հոգի: Ժողովի նախագահը կանչում է մէկ-մէկ ընտրողներին և դնում նախ ասենք, պահանջականների թեկնածուների տուփերը—Ա. Բ. Գ. և այլն: Հէնց որ Ա.-ն ստանում է 100 ձայն, նա համարւում է արդէն ընտրւած. ուստի և, նոյն կուսակցութեան համախոհները, ձայնը չը կորցնելու համար, այլևս իրենց ձայնը չեն տալիս Ա.-ին այլ Բ.-ին և այլն: Այդպիսով ուրեմն, ամեն մի ընտրելի, հէնց որ ստանում է 100 ձայն, համարւում է ընտրւած: Ուրեմն՝

եթէ 600 պահանջական են և 400 լիբերալ, կընտրւեն 6 հոգի առաջիններից, 4 հոգի վերջիններից:

Բայց, բանն այն է, որ գործնական կեանքում այդպիսի «կլոր» թւով ձայներ չեն տրւում, կարող են ձայները այսպէս բաժանւել—650 Ա. կուսակցութեան կողմը, 350 Բ. կուս. կողմը: Աւելի է բարդւում հարցը, երբ ոչ թէ երկու, այլ 3—4—5—6 կուսակցութիւն կայ մի ընտրական շրջանում: Այդ դէպքում ձայները կարող են այսպէս բաժանւել, 335 Ա. կուսակց., 280 Բ. կուսակց., 185 Գ. կուսակց., 175 Դ. կուսակց., 70 Ե. կուսակց. և 36 Զ. կուսակց.: Եւ եթէ ընտրւած պիտի համարւեն (1000:10=)100 ձայն ստացող ընտրելիները միայն, ապա ուրեմն՝ յիշած դէպքում ընտրւած պիտի համարւել 3 Ա. կուսակցութիւնից, 2 Բ. կուս. 1 Գ. կուս. և 1 Դ. կուս.: Ե. և Զ. կուսակց. թեկնածուները, ստացած չը լինելով պահանջւած թւով ձայներ, չեն համարւում ընտրւած. բայց չէ՞ որ հարկաւոր է ոչ թէ 7, այլ 10 հոգու ընտրել: Մնացած 3 ներկայացուցիչը որ կուսակցութեան մարդ պիտի լինի:

Դրա համար ինչպէս որ այժմ ընդունւած է Ռուսաստանում ընտրութիւնների ժամանակ, նկատի են առնւում ամենամեծ մնացորդները: Վերևի օրինակով ուրեմն Ա. կուսակցութիւնը կտայ 3 պատգ., Բ. կուս., 3 (2+1), Գ. կուս. 2 (1+1), Դ. կուս. 2 (1+1), ընդամենը ուրեմն՝ 10 պատգամաւոր:

Բելգիացի իրաւագէտ Վիկտոր դ'Օնդսի առաջարկութիւնը մի փոքր այլ է, որի էութիւնը կայանում է հետևեալում:

Վերցնենք վերի թւերը: Ասենք թէ 10 ներկայացուցիչ ընտրող 1000 ձայնը բաժանւում է այսպէս:

415 սոցիալ-դեմոկրատներ

284 դաշնակցականներ

180 ս.-յեղափ.

121 կադէտներ

Այդ բոլոր ձայներից իւրաքանչիւրը վերցնենք և բաժանենք 2-ի, 3-ի, 4-ի վրայ և այլն. կը ստանանք որ

$$415:2=207:3=138:4=103,$$

$$284:2=142:3=94:4=71.$$

$$180:2=90:3=60:4=45.$$

$$121:2=60:3=40:4=30.$$

Ստացւած բոլոր թւերը մենք կը վերցնենք կարգով, սկսած ամենամեծից, մինչև որ լրանայ 10 պատգամ. թիւը: Այսպիսով 1-ին տեղը կը պատկանի ս.-դ.-ներին, 2-ը դաշն. 3-րդը կը կին՝ ս.-դ.-ներին, 4-րդը ս.-յեղ.-ներին, 5-րդը կը կին դաշն., 6-րդը կը կին ս.-դ.-ներին, 7-րդը կադէտներին, 8-րդը կը կին ս.-դ.-ներին, 9-րդը կը կին դաշն., 10-րդը կը կին ս.-յեղ.-ին:

Ուրեմն կը ստացւեն այսպիսի թւեր.

415 ս.-դ.-ներ	4 ներկայացուցիչ
284 դաշնակց.	3 ներկայացուցիչ
180 ս.-յեղ.	2 ներկայացուցիչ
121 կադէտ.	1 ներկայացուցիչ

1000 ընտրողներ 10 ներկայացուցիչ

Տեսնում ենք, պրոպորցիոնալ ընտրութիւնները տյնքան էլ «անսովոր բարդութիւններ» չունեն և ոչ էլ նրանց հասկանալու համար կարեւոր են «մաթեմատիքական տրակտատներ»,—ինչպէս որ կարծում են այդ ընտրութիւնների հակառակորդները: Բնդհակառակը ակներև են այդ սխառմի առաւելութիւնները: Բացի այն, որ այդպիսով ամեն մի կուսակցութիւն

համեմատական չափով հնարաւորութիւն է ստանալ ներկայացուցիչներ ունենալու այդ սխառմը տալիս է և հետեւել արդիւնքները.

1. Կուսակցական կադմերի մէջ եղած անհամունները բոլրամասն են: Մաթորիտար ընտրութիւնների ժամանակ շատ անգամ սակաւաթիւ ձայների շնորհիւ յանկարծ կարող է մի կուսակցութիւն մի քանի ներկայացուցիչ աւելի կամ պակաս ուղարկել, իսկ համեմ. ընտր. դէպքում յայտնի է արդէն մի կուսակցութեան ձայների թիւը, և նա այդ ձայների համեմատական չափով միայն ներկայացուցիչ ունենալ կարող է, ոչ ուելի և ոչ էլ պակաս:

2. Պարզ է նաև վերոյիշեալից, որ պրոպորցիոնալ ընտրութիւնները մեղմացնում են կուսակցութիւնների պայքարը ընտրութիւնների ժամանակ:

3. Վերացւում են շատ անգամ իրար հակառակորդ համարող կուսակցութիւնների մէջ կայացող համաձայնութիւնները՝ ընտրութիւնների ժամանակ:

4. Վերանում են նաև այդ դժւարութիւնները, որոնք կապւած են ընտրական շրջանների հետ: Ամենալաւն այն կը լինէր, ի հարկէ, եթէ ամբողջ երկիրը համարէր մէկ ընտրական շրջան:

Եւէյցարիայում, Բելգիայում և ուրիշ երկիրներում այժմ նաև Ռուսաստանում ընդունւած է պրոպորցիոնալ ընտրութիւնների սխառմը, որն և տալիս է այժմ հետաւանքներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. Ժողովրդապետութիւն

Ժողովրդապետութեան էութիւնը:—Անմիջական և ներկայացուցչ. ժողովրդապետութիւն:—Ինքնիշխանութիւն և ինքիշխանութիւն:—Ընտրողական իրաւունք:

II. Նախընտրական պայմաններ

Խօսքի, մամուլի և ժողովուրդների ազատութիւն:—Անձի և ընտանիքի անձեռնմխելիութիւն:—Ընտրող. շրջաններ և ընտրութիւնների կարգաւորումը:

III. Ընդհանուր ընտրական իրաւունք

Հաւասար ընտրողական իրաւունքի էութիւնը:—Սահմանափակումներ:—Դատարան ներկայացուցչութիւն կարողութեան և կրթութեան ցենզ:—Բնակավայր:—Հասարակական միջոցներից օգտւողներ:—Զինւորականներ և չինովնիկներ:—Այլացեղ և այլակրօն ընտրողներ:—Կանայք:—Անչափահասներ, հոգեկան հիւանդներ, յանցագործներ և օտարապատակներ:

IV. Հաւասար ընտրութիւններ

Հաւասար ընտրողական իրաւունքի էութիւնը:—Պլուրալիստիկ:—Սրա պաշտպանները:—Անհեթեթութիւնը:—Անգլիա, Բելգիա, Աւստրիա, Պրուսիա:—Ընտրողական աշխարհագրութիւն:—Գերմանիա:

V. Համեմատական (պրոպորց.) ընտրութիւններ

Մաժորիտար ընտրութիւններ:—Փոքրամասնութեան իրաւունքի խախտումը:—Օրինակներ:—Փոքրամասնութեան ներկայացուցչութիւն:—Համեմ. ընտրութիւններ:—Վ. դ'Օնգարի սխառնումը:—Համեմատ. ընտր. առաւելութիւնները:

VI. Ուղղակի և ցուցակի ձայնավարում

Ուղղակի ձայնավարութեան էութիւնը:—Անուղղակի ընտրութիւնների էութիւնը:—Երկաստիճան և բազմաստիճան ընտրութիւններ:—Դադարի ձայնավարութիւն և նրա առաւելութիւնները և բաց քվարկութեան թերութիւնները:—Վերջաբան:

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- № 62. Հ. Յ. Դաշնակցութեան հայերէն ծրագիր 20 կ.
 № 63. Նոյնը ուսերէն 20 կ.
 № 64. Հ. Յ. Դ. հաղագոյն ծրագիր հայերէն 10 կ.
 № 65. Նոյնը ուսերէն 10 կ.
 № 66. Նոյնը վրացերէն
 № 67. 1917 թ. ապրիլի 6—12 Հ. Յ. Դ. Ռայո-
 հան ժողովի որոշումները 15 կ.
 № 68 Նոյնը ուսերէն 15 կ.
 № 69 Ա. Աբեղեան. Ի՞նչ է իրաւական պետու-
 թիւն (II հրատարակութիւն). 1 ո.
 № 70. Ա. Աբեղեան. Ժողովրդավար ընտրութիւն-
 ներ, (II հրատարակութիւն). 70 կ.
 № 71. Գ. Ս. Ազգային հարցը, Աւստրոսլաւիա և Ֆե-
 դերացիա 25 կ.
 № 72. Ֆ. Լասսալ. Սահմանադրութեան էութեան
 մասին, թարգ. Լ. Բարայեան (II հրատ.) 50 կ.

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊ.

Պահուար գտնուում է Тифлисъ, Лермонтовская
 № 12 Библиотека «АРАЧЪ»:

ՀՀ Ազգային գրադարան



NL0206439

35. 6/5